

15840 4)

Պրոլետարիատ բողոք յերկրների, միացե՛!

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Ա Դ Ր Բ Ե Զ Ա Ն Ի

## 10 Տարին

(ՆՅՈՒԹԵՐ—ԹԵԶԻՄՆԵՐ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ).



Հրատարակություն Ադրբեյջանի (թ) Կենտկոմի յեկ Բագվի Կոմիտեի  
Բ. Ա. Գ. Ա. Ի.—1930

Напечатано в гостиноградии  
„Красн. Вост.“ Азполиграфа,  
Баку, Караптинная, 84.  
Главлит № 2938.  
Стат-формат А 6.  
Заказ № 6560. Тираж 2000.

321.81(42.94)

PN-84

75 JAN 2010

26 SEP 2006

# ՆՅՈՒԹԵՐ-ԹԵԶԻՍՆԵՐ

## ԱԴՐԲԵԶԱՆԻ ԽՈՐՃՐԱՅՆԱՑՄԱՆ 10-ԱՄՅԱ- ԿԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ \*

1. Խորհրդային Ազգը բեղանի տասնամյակը վոչ միայն Ազգը բեղանի աշխատավորների տոնն և, այլև Խորհրդային Միության բոլոր աշխատավորներինը, խորհրդային և արտասահմանյան Արեւակերպի բոլոր աշխատավորներինը: Բազվի պրոլետարիատի և նրա ղեկավարության տակ գտնվող Ազգը բեղանի գյուղացիության պայքարը Խորհրդային Ազգը բեղանի համար՝ ընդդեմ մուսավաթական հակա-հեղափոխության և արևմտյա-յեվրոպական իմպերիալիզմի անխվելի կերպով կապված է լեզել Ռուսաստանի պրոլետարիատի պայքարի հետ՝ ընդդեմ ոռուսական հակա-հեղափոխության և համաշխարհային իմպերիալիզմի: Պրոլետարական հեղափոխության հաղթանակն Ազգը բեղանում և անզլիական իմպերիալիստների ագենտ մուսավաթիստների իշխանության տապալումը վոչ միայն ազատագրել ե հալածանքից և շահագործումից Ազգը բեղանի աշխատավոր մասսաներին, վոչ միայն լեզակետըն և յեղել ամբողջ Անդրկովկասում խորհրդային իշխանության հաղթանակի և խորհրդային յերկրի տնտեսական հզորությունն ամրապնդելու համար, այլև հսկայական ազդեցությունն ունեցել ազգային ազատագրական հեղափոխական շարժման զարգացման վրա արտասահմանյան Արևելքում՝ Պարսկաստանում, Տաճկաստանում և այն Դրա մեջն և կայանում ազրիլցան հեղափոխության միջնազգային պատմական նշանակությունը:

Խորհրդավոյն Աղքաբեջանի տասնամյակը զուգադիպում և Մայիսի 1-ի տօնակատարությանը և սոցիալիստական մրցության 1-ին տարեկարձին:

Այժմ մենք ժողովրդական անտեսության բարձրացման, ազգային կուլտուրայի զարգացման և սոցիալիստական շինարա-

<sup>\*)</sup> Այս թեղիսները հաստատված են Ադրբեյջանում (Բ) Կենտկոմի և Բազ-  
թագավառի աշխատայի և մասսայական կամպանիաների բաժնի ու Ազգա-  
կույտայի համար կազմակերպության կողմէն կազմակերպության անվան ինստիտուտի  
կողմէց:

բության արդյունքներն ենք հաշվի առնում. և հենց զբանով մերկացնում ենք մուսավաթիստներին, դաշնակներին և մենչեղիկներին, փորոնք փորձում են սոցիալիստական շինարարության գեղագրություններն ուստագործել հակա-խորհրդավորներին հակա-խորհրդավորներին հակա-խորհրդավորներին համար: Տօնակատարությունը պետք է անցնի 10-ամյա սոցիալիստական շինարարության նվաճումների ստուգման և թերությունները լիրեան բերելու լողունգիւտակ, նաև պետք է բանվորների, բատրակների, չքավորների և միջակների ամենալայն մասսաներին համախմբի քաղաքի և գուղի սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների շուրջը:

## ՅԱՐԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻՑ ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԵԶԱՆ

2. Մինչև հեղափոխությունն Աղրբեջանը լիղել և ցարական Ռուսաստանի գաղութը: Յեթե Ռուսաստանում պրոլետարիատն ու գյուղացիությունը տառապում եին կալվածատերերի և բուժուացիյի լծի տակ, ապա Աղրբեջանում այդ գասակարգային հալածանքին ավելանում եր նաև ազգային հալածանքը: Աղրբեջանի բանվորները և գյուղացիները տանջվում եին վոչ միայն խաների, բեկերի և բուժուացիալի շահագործումից, վոչ միայն սակավահողությունից և ցածր աշխատավարձից, այս և ազգային հալածանքից, քաղաքական իրավագրկությունից, մայրենի լեզվով դպրոց չունենալուց և չափազանց ցածր կուլտուրական զարգացումից (որինակ՝ արդյունաբերության մեջ թուրքերից ընդունում եին միայն սեագործ և վոչ փորակլալ բանվորներ): Իրարդեմ պայքարող հայ և թուրք բուժուացիան ու ցարիզմը հմտությամբ ուստագործում եին ազգային—կենցաղային տարբերությունները և աշխատավորների կրոնական մոլեունդությունը. նրանք գրգռում եին թուրքերին հայերի գեմ, հայերին թուրքերի գեմ. զրանով նրանք արգելք եին հարուցանում բանվորների և գյուղացիների համար՝ իրենց գասակարգային շահերը զիտակցելու: Զնայած փոք Բաղվում բանվորական և հեղափոխական սոցիալ-դեմոկրատական շարժումը քսան տարվա պատմություն ուներ, բայց և այսպես զյուղացիությունը կազմակերպված չեր, վորովհետեւ Բագուն թույլ եր կապված Աղրբեջանի գյուղի հետ. Բագվի առաջավար պրոլետարիատի ազգեցությունն Աղրբեջանի գյուղի վրա շատ թույլ եր: Այդ բանը և թուրք բանվորների անկազմակերպ լինելը՝ 1917—18 թվերին հնարավորություն և տվել մուսավաթ բուժուացիան - կալվածատերական կուսակցությանը

ժամանակավորապես ազգել թուրք աշխատավորական մասսաների զգալի խավերի վրա:

3. Սպազմին և դասակարգային հարաբերությունների բարգությունը վորոշել է 1917—18 թվերի հեղափոխության բնույթը Աղրբեջանում: Բագվի հեղափոխական պրոլետարիատը գրավելով իշխանությունը 1918 թվի մարտին (Բագվի կոմունա)՝ չկարողացավ այդ իշխանությունը տարածել Աղրբեջանի ամբողջ տերրիտորիայի վրա: Բագվի խորհրդային իշխանության դեմ համախմբում են հակա-հեղափոխության բոլոր ուժերը՝ սկսած անզիական և գերմանա տաճկական իմպերիալիզմից ու վերջացրած մուսավաթիստներով, դաշնակներով, մենշենիկներով և եսերներով:

Արդեն 1918 թվի մայիսին Թիֆլիսում ստեղծվում և «անկախ Աղրբեջանի հանրապետության» կառավարությունը, վորը շուտով տեղափոխվում և Գյանջա և իր շուրջն համախմբում Աղրբեջանի բոլոր հակա-հեղափոխական ուժերը՝ Բագվի կոմունայի դեմ կռվելու համար:

Թրքական կոմունիստական կադրերի չափազանց թույլ լինելը, Աղրբեջանի գյուղի հետ Բագվի պրոլետարիատի կապի բացալությունը, իմպերիալիստների միջամտությունը և մուսավաթին ցուց աված ակախվ ոգնությունը,—այս ամենը մուսավաթիստներին հնարավորություն և տվել՝ ճնշել աճող գյուղացիական շարժումը, խաների և բեկերի դեմ ուղղած զյուղացիական շարժումը դարձնել ազգային կոտորած՝ թուրքերի և հայերի միջև, թուրքերի և քրոնտից վերադարձող ուսւ զինվորների միջև:

Նացիոնալիզմի թույնը կրծել և նաև Բագվի ինտերնացիոնալ պրոլետարիատին: Շարունակվող իմպերիալիստական պատերազմի պայմաններում՝ Անդրկովկասը 1918 թվին դարձել և անզիո-քրանսիփական և գերմանական իմպերիալիզմի պատերի ասպարեզ: Արևմուտքից և հարավից նրա վրա յեն հարձակվել գերմանացիները և տաճիկները, Պարսկաստանի կողմից—անզիացիները: Իմպերիալիստների հարձակմանը Բագվի պրոլետարիատը համերաշխ հականարգած չի տվել: Թուրք բանվորների վրա մուսավաթիստների ունեցած ազդեցության հետ միասին՝ ուսւ և հայ բանվորների վորոշ մասը յենթարկվել և բուժուացիան—նացիոնալիստական ազիտացիային: Այդ տրամադրություններն առանձնապես աճել են չորրիմ հակա-հեղափոխական կուսակցությունների—դաշնակների, եսերների և մենշենիկների հանցավոր

գործունելության, վորոնք ազիտացիա եին անում անզլիացիներին հրավիրելու համար:

1918 թվի հուլիսի 31-ին Բագվի կոմունան ընկել է, իսկ Բագվի իշխանությունն անցել է Ցենտրոկասպիի մեջնկիլական—Խերական դիկտատուրայի ձեռքը, վորը մի շիրմա եր անզլիացիան իմպերիալիզմի համար: Կոմունալի անկման հիմնական պատճառն այն եր, վոր Բագվի պրոլետարիատի մեջ բացակալում եր Միակատար ինտերնացիոնալ միասնականությունը, վոր բացակայում եր Բագվի պրոլետարիատի ու Աղրբեջանի գյուղացիության կապը և վոր Բագուն կտրված եր Խորհրդային Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատից:

4. Ինչպես և սպասելի եր, անզլիացիներին հրավիրելուց հետո տեղի ունեցավ տաճկական - գերմանական իմպերիալիզմի զորքերի արշավանքը: Սեպտեմբերի կեսերին Ցենտրոկասպիի դիկտատուրան տեղի տվալ տաճկական գեներալների դիկտատուրային, վորը քողարկված եր «անկախ» Աղրբեջանի բուրժուական—կալվածատիրական կառավարությունով: Այդ դիկտատուրան իր գործունելությունն սկսեց մի չսպած դաժան ազգային կոտորած սարքելով և բանվորական կազմակերպությունների դեմ տերրոր ստեղծելով: Ցենտրոկասպիի մենշևիկա-խերական դիկտատուրան անզլիացիներին տվալ գնդակահարելու Բագվի պրոլետարիատի 26 առաջնորդներին՝ Շահումյանի, Զափարիձեի և Ազիզբեկովի գլխավորությամբ. իսկ տաճկական գեներալների դիկտատուրան և նրանց ոգնող մուսավաթիստներն իրենց նպատակ եին դրել Փիզիքապես վոչնչացնել Բագվի կոմունիստական կազմակերպության մնացորդները՝ մասսական գնդակահարությունների, ձերբակալությունների և ջարդերի միջոցով:

5. Աղրբեջանի գենոկրատական հանրապետության ինքնուրույն գոյության հենց սկզբից նրա անկախությունն ունեցել է խարսիկ բնույթ: Կազմված լինելով Տաճկաստանի ոգնությամբ, նվաճելով «իր» տերրիտորիան և մայրաքաղաքը տաճկական սվինների միջոցով նա լիակատար կախման մեջ եր ոսմանյան պետությունից: Տաճիկներն ուզում եին Աղրբեջանը դարձնել իրենց հյուսիսային պրովինցիան: Այդ նպատակով ե, վոր նրանք չեին ճանաչել Աղրբեջանի քաղաքական անկախությունը՝ սպասելով հարմար մոմենտի վերջինիս ձևականորեն իրենց կայսրության մեջ մտցնելու համար: Դրա հետ միասին նրանք զրավել եին յերկրի տնտեսության հրամանատարական բարձունքները, պայմանագիր եին կապել վորով Աղրբեջանի յերկաթուղիներն անցնում եին նրանց ձեռքը հինգ համար:

վաթական կառավարությանն այնքան նավթ արտահանելու ջաճկաստան, վորքան նրան հարկավոր կլինի, նաև արտահանել 2 միլիոն լիրայի արժողությամբ գլխավորապես Աննդի մթերք-ներ:

Տաճկական գեներալներն առանձնապես խստորեն ճնշել են գյուղացիական ազգարարացին շարժումը՝ զուրացի և անունով, պատժել են նրա գլխավորներին, հարցուրապատժիկ վերադրձել են բեկերին և խաներին գյուղացիների կողմից խված հողերը:

Այդ բոլորը կատարվել ե Աղրբեջանի կառավարության ակտիվ ոգնությամբ: Այսպիսով մուսավաթիստները՝ չնայած անկախության մասին արվող մշտական աղաղակներին՝ Աղրբեջանը դարձրել են սուլթանական կալվածատիրական - ֆեոդալական Տաճկաստանի գաղութ:

6. Իմպերիալիստական պատերազմում Տաճկաստանի պարտվելուց հետո՝ համաձայն Անտանտայի հետ կապած հաշտության պայմանագրի՝ տաճկական գորքերն արագությամբ հեռացել են Աղրբեջանից: Մուսավաթական կառավարությունը՝ վոր գոռում եր «Աղրբեջանի անկախության» մասին,—24 ժամի ընթացքում փոխում ե իր որենտացիան, վիճարում ե նոր տեր, և դրա համար ենզելի պատվիրակություն ե ուղարկում անզլիացիների մոտ: 1918 թվի նոյեմբերի 17-ին ենզելուց համգու և գալիս գեներալ Տոմսոնի զրամացար. մուսավաթիստներն ընդառաջել են նրան, վորպես անգլիական իմպերիալիզմի հավատարիմ ստրուկներ: Անզլիական իմպերիալիզմի նպատակն եր Անդրկովկասը գարձնել բրիտանական կայսրության գաղութ, կովել Խորհրդային Ռուսաստանի գեն, տիրել Բագվի նավթին, բրիտանական գաղութները և ճնշված Արևելքը չեղոքացնել հեղափոխական Ռուսաստանից:

7. Բագվի պրոլետարիատը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ իր ամբողջ պայքարը սերտ կապում եր Խորհրդային Ռուսաստանին ոգնություն ցույց տալու հետ, վորը պաշտպանվում եր իմպերիալիստների հարձակումներից: 1919 թ. մայիսյան հսկայական գործադուլն անցել ե Խորհրդային Ռուսաստանի հետ ապրանքափոխանակություն հաստատելու լողունդի տակ և ապացուցել ե, վոր Ռուսաստանի և Բագվի պրոլետարիատի ու նրա ղեկավարության տակ գտնվող Աղրբեջանի գյուղացիության հեղափոխական կովի շահերը միենում են:

Մայիսի 25-ին բանվորական կոնֆերանսը Բագվի պրոլետարիատի անունից հայտարարել ե. «Բագվի ամբողջ պրոլետա-

բիստն իր բոլոր գործողություններով և իրա տրամադրության տակ ունեցած միջոցներով կաջակցի Աղբբեջանի կառավարությանը, յեթե նա իրոք կկավի Դենիկինի բանդաների դեմ»:

Մասսաներին Դենիկինի դեմ պայքարելու շուրջը համախմբելու համար՝ բոլշևիկյան կազմակերպությունը բանվորական կոնֆերանսի միջոցով Անդրկովկասի բանվորների և գուղղացիների միասնական ֆրոնտի լոգունքն եր բաց թողել և առաջարկել եր՝ Թիֆլիսում հրավիրել ամբողջ Անդրկովկասի խորհուրդների ու բանվորական կոնֆերանսների արտակարգ համագումար՝ Անդրկովկասի բոլոր աշխատավորների գործողությունները համաձայնեցնելու համար։

Բացի դրանից՝ Բագվի բոլշևիկիներն անմիջական ոգնություն ել եին ցուց տալիս Խորհրդավին Ռուսաստանին. նրանք կազմակերպել են անլեզակ կերպով մի քանի տասնյակ հազար փութ ընդին Հաշտարխան ուղարկելու գործը՝ Կարմիր բանակի ավտո և աերո-գործամասերի համար։

**Տ. Մուսավաթական կառավարությունը հենց ոկտոբեր վորք եր գրել Անտանտայի իմպերիալիզմին և ռուսական հակառակա փոխությանն անձնատուր լինելու ճամբի վրա: Աղբբեջանի պատվերակությունը, վոր Վերսալի կոնֆերանսի համար Փարիզ եր գնացել 1919—20 թվին, մի հոգս միայն ուներ՝ «իր» լերկիքը հանձնել վորեւ հովանավորի: Վորովինեաւ անդիացիները տատանվում եին, դրա համար ել մուսավաթական պատվերակները գնացին և ամերիկացիների և իտալացիների մոտ՝ նրանց առաջարկելով Աղբբեջանը վորպես գաղութ: Նրանց «հաջողվել եր» պայմանագիր կնքել, վորով Աղբբեջանը դառնում եր Անդիացի յեթամանդատային գաղութ: Անդլիային եր տրվում Աղբբեջանի տնտեսական, ֆինանսական, զինվորական և նույն իսկ կուլտուրական կանքի դեկավարությունը:**

Մուսավաթիստների քաղաքականությունը կայանում եր հետեւալում՝ խաղաղ ապրել ուստ սպիտակ զվարդիականների հետ և վոչ մի հարաբերության մեջ չմտնել Խորհրդավին Ռուսաստանի հետ: Դենիկինի բանակի ջարդվելը վերջնականապես բարի հարաբերություններ ստեղծեց լերկու հակա-հեղափոխությունների միջև. մուսավաթական կառավարությունը հոժարությամբ Աղբբեջանի վրայով թույլ տվավ արտասահման անցնելու սպիտակ բանակների մասցներին: Բոլորովին ուրիշ վերաբերմունք ուներ նա գեպի Խորհրդավին Ռուսաստանը: Ռուսաստանի արևոտեսական բլոկագան իրագործվում եր շատ խիստ: Ալդ զեռ բավական չել Դենիկինի ջարդվելու ժամանակ մուսավաթիստները

մինչև իսկ մտածում եին նրա հետ միասին կովել Խորհրդավին Ռուսաստանի դեմ: Աղբբեջանի կառավարությունը՝ վրացական մենշևիկիների հետ միասին մշակել են Վագիկավկազը և Դերբենդը գրավելու պլանը, վորպես բազաներ Կարմիր բանակի դեմ կավելու համար: Հասկանալի ե, ուրեմն, վոր յերբ արտաքին գործերի ժողկոմ Զիչերինն առաջարկել է Աղբբեջանին զինվորական դաշինք կապել Դենիկինի դեմ կովելու համար, մուսավաթիստները կարուկ կերպով հրաժարվել են: Ալդպիսով նրանց ամբողջ արտաքին քաղաքականությունը լերկու մուենտի եր հանգում՝ Աղբբեջանը գարձնել իմակերիալիզմի գաղութ և ասպարեց՝ խորհրդավին Ռուսաստանի և Արևելքի ժողովուրդների ազգային-ազգատագրական շարժման գեմ կովելու համար:

9. Ալդպիսով՝ յեթե մուսավաթական կառավարությունն իր արտաքին քաղաքականությամբ նախ տաճկա-գերմանական և ապա անզլիական իմպերիալիզմի ստրուկի դերն եր խաղում, ապա նրա ներքին քաղաքականությունը լիովին և ամբողջովին վորոշվում եր խաների, բեկերի և բուրժուազիայի շահերով:

**Նավթարդյանաբերազներն անշեղ կերպով նարձակվում եին՝ իջեցնում երն աշխատավարձը, մտցնում երն արտածամբա աշխատանքը, ներքին կարգ-կանոնի պայմանները վատացնում երն. մյուս կողմից ել մատակարարման մեծ ձգնաժամ եր. այս ամենը վատացնում եր Բագվի պրոլետարիատի դրությունը:**

Աշխատանքի մինիստրը 1919 թվի հունվարի 15-ին մի վորոշում և հանում, վորով վերացվում են կոլեկտիվ պայմանագրի բոլոր իրավական նորմաները: Մուսավաթական կառավարության այդ քայլն իսկուն ոգտագործում են նավթարդյունաբերողները՝ պրոլետարիատի վրա արշավելու համար:

Աշխատավարձը չնշին եր. մուսավաթական կառավարությունն ել հրաժարվում եր կանոնագորելու մատակարարումը. այդպիսի պայմաններում ամբողջ 1919 թվի ընթացքում նավթարդյունաբերական բանվորների նյութական ապահովությունը նախապատերազմական չափի 20 տոկոսից չի բարձրանում: 1919 թվի հոկտեմբերին իրական աշխատավարձն ընկնում ե 18 տոկոսի (1914 թվի համեմատությամբ), իսկ 1920 թվի առաջին ամիսներին ել ավելի ե ընկնում:

10. Քաղաքական ճնշումը և գոյության անտանելի պայմանները Բագվի պրոլետարիատի մինչև իսկ ամենահետամիաց խավերին կովի եին քաշում բուրժուազիայի և նրա գլուխ կանգնած մուսավաթական կառավարության դեմ: Իրական աշխատավարձը բարձրացնելու և բանվորական որը կրծատելու համար

տնտեսական կոիվ սկսելով՝ մինչեխուկ բանվորների ամենահետամաց խավիքն արագորեն համոզվում են, վոր առանց մուսավաթիստների դիկտատուրան տապալելու, նրանք չեն կարող բրենց դրությունը լավացնել: Դրա համար ել Բագվի պրոլետարիատի 1919 թվի մայիսյան գործադուլային պատքարն արդեն ընդունում ե քաղաքական բնույթ:

Եսերները և մենցեկիները, վոր բոլշեվիկների պարտության շնորհիվ սկզբում իրենց ձեռքն են առել հանքործկոմիները, պղոփմիությունները և բանվորական կոնֆերանսը, արդեն 1919 թվի սկզբին դուրս են վրադում այստեղից: Բագվի պրոլետարիատի դեկավար տնտեսական և քաղաքական որգանը դառնում ըիտի դեկավար տնտեսական և քաղաքական պորտին գլուխ են կանգնած կոմունիստները:

Բանվորական կոնֆերանսի դեկավարությամբ՝ ամբողջ Բագվի պրոլետարիատն, առանց ազգերի խսրության, միասնական ֆրոնտով դուրս և գալիս անգիտական իմպերիալիզմի դիկտատուրայի և նրան քողարկող մուսավաթական կառավարության դեմ: Թուրք բանվորներն աստիճանաբար գրավվում են ընդհանուր գասակարգային կովի մեջ: Այդ կողմից ահագին դեր են խաղացել թուրքական կոմունիստական կազմակերպությունները—«Հումմեթը» և «Ադալաթը», վորոնք լիովին մերկացնում են մուսավաթիստների՝ «ամբողջ թուրք ժողովրդի» անունից հանդես գալու փորձերը:

11. Ազգարային հարցում մուսավաթական կառավարությունը հավատարմությամբ ծառայում եր խաների և բեկերի շահերին: Դեռևս մինչև Բագու տեղափոխվելը նա մի վորոշում է հրատարակել, վորով լիովին կանգնեցնում եր հողային «ռեֆորմը», անմիջապես դադարեցնում եր մասնատիրական և պետական հողերի գրավումը գյուղացիների կողմից: Միաժամանակ վերականգնում են այն բոլոր հետ գնման վճարումները, վոր վերականգնում են զավթել շատ հողեր, վոր առաջ գյուղացիները վճարում են խաներին և բեկերին ցարիզմի ժամանակ:

Կալվածատերերն ոգտվում են այդ որենքներից և մուսավաթական դիկտատուրայի որով վոչ միայն խլում են գյուղացիներից փետրվարյան հեղափոխությունից հետո արված բոլոր նվազումներն, այլև կարողանում են զավթել շատ հողեր, վոր առաջ գյուղացիներին են պատկանում: Տեղատեղ մինչև իսկ կերաց գյուղացիներին են «բահրա» և «մալջնաթ» կոչված Փեողալական տուրքերը, վոր 1913 թվին վերացված են:

Աշխատավորներին հեղափոխական պայքարից հեռու պահելու մուսավաթական կառավարությունն ամեն կերպ վառում եր ազգային թշնամությունը՝ Ազգբեջանի ազգերի և ժողովուրդների միջև: Պաշտպանելով բեկերի շահերը՝ նա անխնապայքար եր մղում Լեռնալիին Նարաբաղի գյուղացիական շարժման դեմ, դաշնակների հետ միասին ամեն կերպ ազգային ատելություն եր վառում հայ և թուրք գյուղացիության մեջ և արյունության ընդհարումների պրովկացիա եր անում: Մյուս ժողովուրդներին—լեզգիներին, թալիչներին, թաթերին և այն մուսավաթիստները համարում են վորպես թուրք խաների և բեկերի շահագործման առարկա:

Կալվածատերերի լծի անասելի ուժեղացումը և գյուղացիական հողի անամոթ թալանը խաների և բեկերի կողմից՝ ցույց տվին գյուղացիներին, վոր խոսքով ամբողջ թուրք ժողովրդի շահերն արտահայտող մուսավաթական կառավարությունը՝ գործով միայն տիրող գասակարգերին և ծառայում:

Սկսած 1919 թվից ամբողջ Ազգբեջանում ծագալիում է մասսայական գյուղացիական շարժումը, վորն արտահայտվում ե՝ արենդան վճարելուց հրաժարվելով, բեկերին և խաներին ծեծելով, կալվածատերերի հողը խելով և այն:

Գյուղացիական շարժումը չի հանդարտվում, թեկուղ ձնչելու համար կառավարությունը դաժան միջոցներ և ձեռք առնում, զորամասեր և ուղարկում, ձերբակալություններ անում, ծեծում: Այդ շարժումը մեծ զարգացման և հասնում Մուլանում, Ղազախի, Գրանջայի, Շամխորի, Ղուբան և այլ գավառներում:

Գյուղացիների անբավականությունը մուսավաթական իշխանությունից արտահայտվում ե նաև նրանով, վոր մուսավաթական բանակից ասկերները մասսայորեն փախչում են և մի շարք ուժեղ հոգումներ են տեղի ունենում զորամասերում (Աղդամում, Գյանջայում և այլն):

Թուրքական կոմունիստական կազմակերպությունների, մանավանդ Հումմեթի աշխատանքը հնարավորություն և տալիս Բագվի պրոլետարիատին կատ հաստատելու Ազգբեջանի գյուղացիության հետ և զեկավարելու նրան: Տանջվելով մուսավաթական դիկտատուրայի լծի տակ՝ Ազգբեջանի գյուղացիները փըրկությունը տեսնում են միայն շուրջը հրային իշխանության հաստատելու մեջ, կոմունիստական կուսակցության զեկավաթյուն հաստատելու մեջ և Բագվի պրոլետարիատի մեջ: Հումմեթի կողմից Բագվից ուղարկվող գործիչները կազմակերպչորեն ձեւակերպում են հեղափոխական ձգտումը և միացնում են գյուղացիներին խորհրդային իշխանության դրոշակի տակ: Դրա համար նրանք

ոգտագործում եին ամեն տեսակի գյուղացիական ժողովները և կոնֆերանսները, ում կողմից ել վոր նրանք հրավիրված լինել ին: Այդպես և յեղեւ որինակ, Դաղախի գավառի գյուղացիական կոնֆերանսը, վոր հրավիրել եին մինչեփները, բայց նա Բագվի պատվիրակների յելություների ազգեցության շնորհիվ բոլշևիկան բանաձեռք և ընդունել: Խտահաթի կողմից Բագվում հրավիրված գյուղացիական համագումարից՝ բոլշևիների յելույթ ների ազգեցության տակ՝ պատվիրակների մեծ մասը դուրս և գալիս և գնալով բանվորական կոնֆերանսի նիստին՝ իր համերաշխություն և հայտնել Բագվի պրոլետարիատին:

12. Այդպիսով, 1920 թվի սկզբին ամբողջ Աղրբեջանի բան վորները և աշխատավոր գյուղացիներն իրենց ճնշող մեծամասնությամբ համախմբվել եին կոմունիստական կուսակցություն և խորհրդային իշխանության դրոշակի տակ: Բագվի պրոլետարիատը՝ իր հետեւց տանելով Աղրբեջանի գյուղացիությանը՝ կովի եր պատրաստվում Աղրբեջանում խորհրդային իշխանություն հաստատելու համար, Խորհրդային Աղրբեջանի համար:

Այդ վճռական կովի նախապատրաստության մեջ խոշոր քայլ եր Աղրբեջանի յնքեք բաժան-բաժան յեղած կոմունիստական կազմակերպությունների—Ռուսկոմկուսի Բագվի կազմակերպության, Հումմեթի և Աղալյաթի միացումը՝ միասնական կենտրոնացած Աղրբեջանի կոմունիստական բոլշևիների կուսակցության մեջ, վորը կազմվել և Աղրկոմկուսի (ը) առաջին համագումարում—1920 թ. փետրվարի 11—13, Բագվում: Այդ համագումարն անցել և բանվորների և գյուղացիների զինված ապրատամբություն նախապատրաստելու նշանի տակ՝ ընդդեմ մուսավաթական կառավարության, խաների, բեկերի և բուրժուազիայի, վորոնք Աղրբեջանը դարձել եին անզինական գաղութ: Այդ համագումարում ընտրված Աղրկոմկուսի (ը) կենտրոնական կոմիտեն իր ուշագրաւթյան կենտրոնում դնում և իշխանությունը գրավելու համար նախապատրաստվելը:

Այդ ժամանակ՝ մուսավաթիստների հանցավոր քաղաքականության շնորհիվ յերկիրն արագորեն քայլայվում եր, նավթավին արգլունաբերությունը՝ զրկված լինելով կապից Խորհրդային Ռուսաստանի հետ՝ ծանր ճնշաժամ եր ապրում. սովի մատոնված գյուղացիությունը տասնյակ ապստամբություններով իրա ատելությունն եր ցուցագրում դեպի մուսավաթիստները:

Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի—վորն արդեն ջախջախել եր Դենիկինին—Աղրբեջանի սահմաններին մոտենալը մուսավաթական կառավարության անկումը: Նա-արագացրեց մուսավաթական կառավարության անկումը:

Խազգալով անխորսափելի խորտակումը և տեսնելով, վոր անհնարին և գիմագրել բանվորացիության մասսաների ապստամբությանը՝ մնանկացած մուսավաթական կառավարությունն ընկալ ապրիլի 27-ին՝ Բագվի ապստամբած պրոլետարիատի հարգածների տակ:

13. 1920 թվի ապրիլի 28-ին Բագվում իշխանությունն անցավ Խազմա-Հեղափոխական կոմիտեի ձեռքը, վորը նշանակված եր Սղրկոմկուսի (ը) կենտկոմի կողմից:

Ապրիլաւան հեղափոխությունը զուգաղիպում եր արևմտացիփոպական պրոլետարիատի՝ իշխանության համար մզվող և Սրեւելքի ճնշված ժողովուրդների՝ իրենց ազատագրման համար մզվող պայքարի բարձր վերելքին: Համաշխարհային իմպերիալիզմը լարում եր բոլոր ուժերը՝ բանվորական շարժումը և Արեւելքի ժողովուրդների ազատագրման պայքարը դաժանորեն ճնշելու համար:

Ապրիլաւան հեղափոխությունն Աղրբեջանում համաշխարհային հեղափոխության մի մասն եր՝ իմպերիալիզմի դեմ: Դրա համար ել անկախ Աղրբեջանի խորհրդային կառավարության առաջին քայլը յեղբայրական դաշինքի առաջարկն եր Ռուսաստանի խորհրդային հանրապետության՝ կառավարությունը՝ համաշխարհային իմպերիալիզմի գեմ միասին պայքարելու համար և ոգնելու Սրեւելքի ժողովուրդների՝ ազգային-ազատագրման շարժմանը և, առաջին հերթին՝ հեղափոխական Տաճկաստանի պայքարին—ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի: «Հնարավորություն չունենալով սեփական ուժերով գիմագրելու արտաքին և ներքին հականեղափոխության միացյալ բանդաների հարձակմանը՝ Աղրբեջանի Խազմա-Հեղափոխական կոմիտեն առաջարկում և Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությանը յեղբայրական դաշն կապել՝ միասին պայքարելու համար համաշխարհային իմպերիալիզմի գեմ, և խնդրում ե անհապաղ սեալ ոգնություն ցուց տակ՝ Կարմիր բանակի զօրամասեր ուղարկելով», —այսպես եր ասում Խազմա-Հեղափոխական կոմիտեի դիմումը՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը:

Խորհրդային Ռուսաստանի փողկոմխորհը պատասխանում և հետեւալ հեռագրով՝ Լենինի ստորագրությամբ.—

«Ժողկոմխորհը վողջունում է անկախ Աղրբեջանի հանրապետության աշխատավոր մասսաների ապատագրումը և հաստատ համոզված ե, վոր Աղրբեջանի անկախ հանրապետությունը՝ իր խորհրդային կառավարության զեկավարությամբ՝ Խորհրդային Ռուսաստանի հետ միասին—կապաշտականի իր ազատությունը և

անկախությունը Արևելքի ճնշված ժողովուրդների թշնամուց— իմպերիալիզմից.

Կեցցե Աղքաբեջանի անկախ խորհրդավին հանրապետությունը: Կեցցե Աղքաբեջանի և Ռուսաստանի բանվորների և գյուղացիների դաշինքը»:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԵԶԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՅԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՄՏԵՂԾԵԼԸ

14. Իրականացնելով պրոլետարիատի զիկտատուրան՝ Աղքաբեջանի աշխատավորները սկսեցին իրագործել սոցիալիստական շինարարության խնդիրները:

Սպական այդ խնդիրները չեին կարող լուծվել՝ առանց տեղերում Խորհրդային իշխանությունը ձեակերպելու և ամրապնդելու, մասնավանդ գյուղերում: Կուսակցական կազմակերպության թուլությունը գալառներում և գյուղացիների դարավոր հետամնացությունը հսկայական դժվարություններ եին ստեղծում այդ աշխատանքում:

Աղքակոմկուսի անելիքը նրանումն եր կայանում, վոր ամուր կազմակերպի գյուղացիության չքավոր խավերի ակտիվությունը, ուղղի նրան բեկանական և կալվածատիրական տիրապետության ու կուլակության դեմ՝ նրանց բոլոր հողերն ու գույքն առնելով տա գյուղացիներին սպագործելու:

Այդ խնդիրը լուծելը կարելի է ինկել միայն ամրապնդելով և ուժեղացնելով Բագվի պրոլետարիատի կապն Աղքաբեջանի գյուղացիության հետ:

Այդ խնդիրներն իրագործելու համար Աղքակոմկուսը կազմակերպում և Բագվի բանվորներին գյուղում աշխատանքի ուղարկելու գործը: Բագվի բանվորները տեղերում ոգնում են գյուղացիներին՝ հեղափոխական կոմիտեներ կազմակերպելու, կալվածատերերի հողն ու գույքը խլելու, կազմակերպում են չքավորների կոմիտեներ, նրանց համախմբում են սոորին որգանների շուրջը և բացատրում են գյուղացիներին Խորհրդային իշխանության նպատակն ու անելիքները:

Պարտված մուսավաթիստները և պետական հիմնարկներում ու կազմակերպություններում մնացած նրանց չինոֆիլիկները՝ իրենց Խորհրդային իշխանության կողմանիցներ ձեացնելով՝ աշխատում են վարկարեկել Խորհրդային իշխանությունը և խանգարել նրա աշխատանքը տեղերում, գյուղացիական մասսաների խորքերում: Հենվելով կուլակների, հոգեորականների և բանակի խորքերում:

Նին մուսավաթական հրամանատարական կազմի վրա ու Անդըրկովկասի հականեղափոխական ուժերի (վրացական մենշևիկների և դաշնակների) ողնությամբ՝ մուսավաթիստները կազմակերպում են հականեղափոխական ապստամբություն (Գյանջայում, Նուխում, Զաքաթալայում, Ղարաբաղում) ընդդեմ Խորհրդային իշխանության՝ աշխատելով դրան մասնակից անել լայն գուղացիական մասսաներին:

Այդ ապստամբությունները հեշտությամբ ճնշվում են, գյուղացիական մասսան չի պաշտպանում նրանց ավանտյուրան, այլ ընդհակառակը՝ ակտիվ մասնակցություն և ցուց տալիս այդ հականեղափոխական ապստամբությունների ճնշմանը: Մուսավաթիստների այդ ավանտյուրիստական, պատմության անիվը հետ դարձնելու փորձն՝ Աղքաբեջանի ամբողջ գյուղացիության համար վերջնականապես պարզեց մուսավաթիստների հականեղափոխական դերը:

15. Խորհրդային իշխանության հաղթանակը Բագվում և Աղքաբեջանում վոչ միայն ներքին, այլ և ահազին միջազգային նշանակություն ունեցավ, մասնավանդ Մերձավոր Արևելքի չերկըների համար (Պարսկաստանի, Տաճկաստանի և այլն):

Արևելքի աշխատավորության հեղափոխական կովի աճումն ընդդեմ միջազգային իմպերիալիզմի և ընդդեմ իրենց սեփական հականեղափոխական ուժերի, վոր Տաճկաստանում ուղղակի զինված կովի ձև եր ընունել իմպերիալիզմի դեմ, ահազին տղակցություն և ստանում, յերբ Աղքաբեջանում հաղթանակում և Խորհրդային իշխանությունը:

Խորհրդային իշխանության Բագվում և Աղքաբեջանում հաստատվելուց հետո Հօկտեմբերյան հեղափոխությունն անմիջական յելք ու կցման կետ ստացավ Արևելքում: Խորհրդային չերկը աշխատավորության հեղափոխական ճակատը Խորհրդային Աղքաբեջանի միջոցով սերտ կերպով կապվեց Արևելքի գաղութային և կիսագաղութային յերկրների աշխատավորության կովի ճակատին՝ ընդդեմ իմպերիալիզմի:

Մերձավոր Արևելքի խոշորագույն արդյունաբերական կենտրոնի Բագվի բազմացեղ պրոլետարիատն Արևելքի հեղափոխության առաջակոր ավանդաբան եր: Խորհրդային իշխանությունը պետք և այնպես աներ, վոր ոգտագործելով դասակարգային կոփմերի մեջ յեփված Բագվի պրոլետարիատի ներկայությունը, Խորհրդային իշխանության գաղափարը տարածեր Արևելքում, ուժեղացներ բանվոր դասակարգի ազգեցությունն Արևել-

քի ժողովուրդների ազգային ազատազրական շարժման վրա և դրա համար Աղբբեջանում ստեղծեր այնպիսի որինակելի խորհրդավին հանրապետություն, վորն որինակ ծառայեր իրենց ազատագրման համար կովող ճնշված ժողովուրդներին:

1920 թ. պղոկետարական Բագվում հրավիրված Արևելքի ժողովուրդների համագումարը, վորը սրբազն հեղափոխական պատերազմ հայտարարեց միջազգային իմպերիալիզմին, անցավ բանվոր դասակարգի հեղափոխական կովի և Արևելքի ժողովուրդների ազատագրական շարժման սերտ միության ազգանշանի տակ:

Համագումարն կազմեց «Պրոպագանդի և գործողության խորհուրդ Արևելքում». այս որգանը, գտնելով Խորհրդային Աղբբեջանի մայրաքաքաքի՝ Բագվի տերրիտորիայի վրա, դարձավ Արևելքի ճնշված յերկրների հեղափոխական շարժման շտաբը:

Աղբբեջանի ապրելլան հեղափոխությունը Պարսկաստանի հեղափոխական շարժման զարգացման խթան հանդիսացավ. դրա հետևանքով Պարսկաստանի հյուսիսային մասում կազմվեց Գիլյանի Խորհրդային իշխանությունը, վորը մի առժամանակ գոյություն ունենալուց հետո ընկալ անդիմական կուսականի սեփական ռեակցիոն ուժերի միացյալ հարվածների տակ:

Աղբբեջանի խորհրդայնացումը հնարավորություն տվեց անմիջապես ոգնելու տաճկական ազգային-հեղափոխական շարժման այն ժամանակ, յերբ նա գոյության անհավասար կույկ եր սկսել միջազգային իմպերիալիզմի ուժերի դեմ:

16. Դեռևս Աղբբեջանի կոմկուսի առաջին համագումարը 1920 թ. փետրվար ամսին հիմնական խնդիր հայտարարեց վոչ միայն Աղբբեջանի, այլ և ամբողջ Անդրկովկասի խորհրդայնացումը: Այդ խնդիրը զգալի կերպով թեթևացավ Աղբբեջանի խորհրդայնացումով:

Հայաստանի և Վրաստանի աշխատավորությունը, վոր հեծում եր մենշևիկների, զաշնակների և նրանց փաստական տերերի՝ անդիմական իմպերիալիստների լծի տակ, ուրախությամբ ընդունեց Աղբբեջանի խորհրդայնացման լուրը:

Հայաստանի կոմունիստական կուսակցության մալիսի 1-ին Աղբբասնդրոպոլում, Յերևանում և այլ տեղերում կազմակերպած ցույցերը դարձան մասսաների տարերային զինված ապստամբություն, վորը կարծ ժամանակով իշխանությունը տվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության ձեռքը, սակայն ճնշվեց զաշնակցականների կողմից:

Այդ գեղաքը պարզ կերպով բնորոշում և Անդրկովկասի աշխատավորության վերաբերմունքը դեպի Աղբբեջանի խորհրդայնացումը: Պրոլետարական հեղափոխության հաղթանակն Աղբբեջանում ուժեղացրեց Վրաստանի և Հայաստանի հեղափոխական շարժումը և ամրացրեց մասսաների վճռականությունը՝ տապալել դաշնակցականների և մենշևիկների ատելի իշխանությունը:

Իրանց թիկունքում աշխատավորության կողմից յեղարական ողնություն ու աջակցություն ունենալով, Հայաստանի և Վրաստանի աշխատավորները 1920 թ. վերջին ու 1921 թ. սկզբին տապալեցին դաշնակցականներին ու մենշևիկներին և Խորհրդային իշխանություն հաստատեցին իրանց մոտ:

17. Հայաստանում ու Վրաստանում Խորհրդային իշխանություն հաստատելուց հետո Անդրկովկասի աշխատավորության առաջ խնդիր կանգնեց ամրացնել յերեք խորհրդային հանրապետությունների՝ Աղբբեջանի, Վրաստանի և Հայաստանի յեղարական միությունը:

*3452*  
*1002*  
*30.9.11*

Անդրկովկասի արյունուանցյալը ցարիզմի ժամանակից և մուսավաթիստների, զանակների ու վրացական մենշևիկների տիրապետության ըրջանից ծանր ժառանգություն եր թողել: Այդ ժառանգությունն եր Աղբբեջանում բնակվող ազգությունների շովինիզմը, ազգային անտոպոնիզմը և փոխադարձ անվըստահությունը: Անա թե ինչու այդ ըրջանում Խորհրդային իշխանության հիմնական անելիքն եր ազգային խաղաղություն հաստատել և վերջ տալ անցյալի անիծած ժառանգությանը: Առանց այս խնդիրի լուծման անհնարին եր իրագործել այն հսկայական անելիքները, վրունք կանգնած երն Անդրկովկասի աշխատավորության առաջ: Զուր չեր ընկ. կենինն Աղբբեջանի, Վրաստանի և Հայաստանի կոմունիստներին ուղղած իր նամակում գրում, վոր անհրաժեշտ և ստեղծել մի «այնպիսի որինակելի ազգային խաղաղություն», վոր բուրժուազիայի ժամանակ չի յեղել և բուրժուական կարգերում անհնարին ե»:

Համաշխարհային իմպերիալիզմի անդադար խարդախություններն Անդրկովկասում ու նրանց գեմ կովկելու անհրաժեշտությունն, Անդրկովկասի յերեք հանրապետությունների բոլոր աշխատավորական մասսաների ուղղմական, քաղաքական ու տնտեսական շահերը վճռականապես պահանջում եին միացնել իրենց ույժերը սոցիալիստական շինարարության ընդհանուր ճակատում: Յեղբայրական վենակցության և սոցիալիզմի կառուցման միացյալ պայմանը ամենալավ մենարկեց բոլոր յերեք յեղ-

բայրական հանրապետությունների միացումը Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների մի ֆեդերացիայի մեջ:

Բագվի պրոլետարիատը, վորը միշտ Ադրբեջանի և Անդրկովկասի աշխատավորների հեղափոխական պայքարի առաջավոր շարքերում եր գտնվում և Խորհրդային իշխանության սկիզբ եր դրել Ադրբեջանում, առաջինը իշղավ նաև Անդրկովկասի ֆեդերացիա կազմելու հարցում: Անդրկովկասի ֆեդերացիա կազմելու ըոգունը, վոր առաջադրել եր Բագվի պրոլետարիատը, ուրախությամբ ընդունվեց Անդրկովկասի աշխատավորության կողմից և շուտով դարձավ ամենից ժողովրդական լոգունգը: Սակայն այդ լոգունգն ամենասուը դիմապրության հանդիպեց մուսավաթիստների, գաշնակների և մենշեկների կողմից: Նույնպիսի դիմապրություն ցույց տվեց ազգայնորեն տրամադրված ինտելիգենցիան նաև Կոմկուսի մի խումբ ազգայնորեն տրամադրված անդամներ՝ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում:

18. Ֆեդերացիայի հակառակորդներն, առաջին հերթին Ադրբեջանում և Վրաստանում, գտնում են, վոր ֆեդերացիա կազմակերպելու ժամանակը չե, և ամեն կերպ խանգարում են նրա իրականացնելուն: Նրանք գտնում են, վոր միացումը քաղաքականապես ֆնասակար է, քանի վոր դա, նրանց կարծիքով, հակասում է մեր կուսակցության ազգային քաղաքականությանը: Ըստ եյության ուլունխտները, մանր-բուրժուական շովինիստական ինտելիգենցիայի բերան հանդիսանալով, կրկնում են ազգայնական բուրժուական կուսակցությունների պատճառարանությունները:

Ներկուսակցական պայքարը քիչ ուշ և յեռանդ չլլեց կուսակցական կազմակերպություններից, առաջին հերթին Ադր. Կոմկուսի (բ) Բագվի կազմակերպությունից, բայց նա կոփեց կուսակցական կազմակերպությունն ու աշխատավորներին նացիոնալիզմի դեմ մզվող կովում և դաստիարակեց մասսաներն իսկական պրոլետարական ինտերնացիոնալիզմի վագով:

Բագվի պրոլետարիատի հեգեմոնիայի տակ Անդրկովկասյան ֆեդերացիա կազմակերպելու համար տարած այդ պայքարը վերջապես հաջողությամբ պատկվեց: Դաշնակց հանրապետությունների լիազոր կոնֆերանսը 1920 թ. մարտի 12-ին ստորագրեց այն պատճական դոկումենտը, վորը հիմք դրեց Անդրկովկասյան ֆեդերացիային:

«Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը, յենելով մեծ պրոլետարական հեղափոխության

հայտարարած ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, ընդունելով պայմանագիր կնքող յուրաքանչյուր կողմի անկախությունն ու վատահատությունը և գիտակցելով, վոր ինքնապաշտպահնության ու տնտեսական շինարարության համար անհրաժեշտ և միացնել իրենց ույժերը,—վորոշել ե, վոր այսուհետեւ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետություններն իրար հետ սերտ ռազմական, քաղաքական ու տնտեսական միություն են կազմում»:

Անդրկովկասյան հանրապետությունների մեջ խորհրդային իշխանության հիմքով հաստատված յեղարարական հարաբերությունները հնարավորություն տվին բոլորովին խաղաղ կերպով ու առանց ցավի վճռելու այդ հանրապետությունների մեջ յեղած մի շարք սուր հարցեր, վոր սահմաններին ելին վերաբերում: Խորհրդային իշխանության հաստատվելու որից Ադրբեջանում զաղարեցին հայ-թրքական զինված ընդհարումները, վոր ծագել են Ղարաբաղում ու Գանձակում մուսավաթիստների ու գաշնակցականների պրովոկացիայի շնորհիվ: Ապահովելով լեռնային Ղարաբաղի գյուղացիության շահերը, խորհրդային իշխանությունը նրան ինքնավար ըրջան կազմակեցելու և լայն տընտեսական ու ազգային-կուլտուրական զարգացման հնարավորություն տվեց:

Անցած տարիների ընթացքում մանր բուրժուական նացիոնալիստական թեքումը շատ անգամ և արտահայտվել կոմունիստական շարքերում, ընդունելով կամ մեծապետական (велиկօքարքական) շովինիզմի կամ նեղ նացիոնալիզմի ձև, բայց ամեն անգամ նա վճռական հականարված և ստացել:

Ադրբեջանի կոմունիստական կուսակցության (բ) Կենտկոմի գեկուցման առթիվ և Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական ույժն ավելի զորեղացնելու մասին վեկս.Պե.ի (բ) Կենտկոմի ընդունած վերջին վորոշումներն առանձին ջանքեր են պահանջում Բագվի պրոլետարիատից, վորն այդ ֆեդերացիայի կազմակերպման նախաձեռնողն և յեղել: Անիսա վերպով կովել նացիոնալիզմի և մեծապետական շովինիզմի ամեն մի արտահայտության դեմ, ամեն կերպ ուժեղացնել մասսաների դաստիարակությունը ինտերնացիոնալ վորով, վորպեսզի ավելի և ուժեղացնել գյուղում տարվող աշխատանքը,—ահա այն հրթական անելիքը, վոր դրված և Ադրբեջանի Կոմկուսի (բ) և նրա գեկավարության տակ գտնվող Բագվի պրոլետարիատի և Ադրբեջանի գյուղացիության առաջ:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՎԱ- ՃՈՒՄՆԵՐԸ

I. Արդյունաբերության ասպարեզում

**19.** Խորհրդավին Աղբըքեցանի տասնամյա գործության ընթացքում բանվորներն ու գյուղի չուներները՝ սերտ կերպով միացած միջակ գյուղացիների հետ Աղբըքեցանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հսկայական նվաճումներ արին սոցիալիստական շինարարության գործում, արդյունաբերության, գյուղական տնտեսության և աղբային կուլտուրայի զարգացման գործում։ Ցարիզմի և մուսավաթի ժամանակ Աղբըքովկասը և մասնավորապես Աղբըքանը գտնվում ելին գաղութիվիճակում, վոր հում նյութ (բամբակ, բոժոժ, բուրդ) և տալիս ուրիշ տեղերում արդյունաբերությունը զարգացնելու համար։ Աղբըքանի արդյունաբերության միակ զարգացած ճյուղը յեղել և նավթարդյունաբերությունը, և նա ել կանգնած և յեղել տեխնիկական զարգացման ծալքահեղ ցածր աստիճանի վրա։ Խորհրդավին իշխանության հաստատվելուց հետո արդյունաբերության, մասնավանդ նավթարդյունաբերության զարգացումն ահագին թափ և ստանում։

**20.** Աղբըքեցանի նավթարդյունաբերության զարգացման ամբողջ ընթացքը նացիոնալիզացիայից հետո փալուն կերպով հաստատում և, թե ինչ առավելություններ ունի արտադրության կազմակերպության պլանային - սոցիալիստական սիստեմը մասնավոր-կապիտալիստական սիստեմի դիմաց։

Մինչև նացիոնալիզացիան Աղբըքեցանի նավթարդյունաբերությունը ներկայացնում եր իրենից առանձին, բաժան-բաժան ձեռնաբությունների մի անկանոն կուտակում։ Այդ ձեռնաբությունները գտնվում են 272 մասնավոր տերերի (ֆիբաների) ձեռքում, վորոնք անխնա մրցում եյին իրար հետ։ Արտադրության զարգացման միակ դրդիչն ավելի մեծ շահ ստանալու կատաղի ցանկությունն եր. մասնավոր կապիտալիստներն, ինարկե, չեփն մտածում արտադրողական ուժերի զարգացման և ժողովրդական տնտեսության շահերի ապահովության մասին։ Հողի խորքում գտնված հարստության ոդտագործումը կատարվում եր ամենապիշտիչ կերպով։ Արտադրության տեխնիկան չափազանց պրեմիստիվ եր. նա թը հանում եին դույլաքարշի միջոցով (ժելոնկալով), գաղը չեր ոդտագործվում և ոդում գումը ըրշիանում եր, վորպես վառելիք տեղում գործ եր անվուն հանած ամբողջ նավթի 15,5%ը, հորափորումը կատարվում եր

նահապետական միջոցով (հարվածային-շտանգավին ձեռվ) և չափազանց դանդաղորեն, նավթի մշակումը կատարվում եր չափազանց հնացած և տեխնիկապես հետամնաց ապարատուրայի միջոցով, եներգետիկայի հիմքը շոգու տնտեսությունն եր և այն։

Իմպերիալիստական պատերազմը և մուսավաթի տիրապետությունը զգալի կերպով վատթարացրին նավթարդյունաբերության գրությունը։ Արտադրած նավթի միջին ամսական քառակն առ 1920 թվի մայիսի 28-ը (նավթարդյունաբերության նացիոնալիզացիայի օրը) ընկել եր ու հասել 172 հազար տոննի, մինչդեռ 1913թ. նա հավասար եր 610 հազար տոննի։ 1913 թ. հորափորումը հավասար է յեղել 172 հազար մետրի, իսկ 1919 թ.-6.600 մետրի (ընկել է 93%). 1919 թ. նավթամթերքների արտահանումը հավասար եր 664 հազար տոննի, մինչդեռ 1908-1912 թ. հնգամյա շրջանում միջին տարեկան արտահանումը արտահայտվում եր 6.166 հազար տոննով (պակասել է 9 անգամ)։ Այս ամենը վկայում է, վոր Բագվի խորհրդայնացման մոմենտին Աղբըքանի նավթարդյունաբերությունը չափազանց ծանր դրության մեջ եր։

**21.** Խորհրդավին իշխանության առաջին տարիները քայլայման առաջն առնելու տարիներ եյին։ 1923/24 թվականից սկսվում է Աղբըքանի նավթարդյունաբերության արագ բարձրացումը, պլանային սոցիալիստական տնտեսությունը մի շարք խոշորագույն հաղթանակներ և տանում։ Նավթարդյունաբերության վերականգնման շրջանը բնորոշվում է նրանով, վոր նավթալին արդյունաբերությունն իր զգալի մասով վերականգնվում եր վոչ թե հին տեխնիկական հիմքով, այլ ավելի բարձր հիմքով։ Նավթահանման սիստեմը վճռականորեն փոխվում է. դույլաքարշի փոխարեն մտցնվում և խորամզիչը (ցլյուկոն հասօն), նավթանորերը սկսում են շահագործել փակ սիստեմով (վորի հետևանքով գաղը չի գոլորիանում, այլ ոդտագործված է)։ Գաղի արտադրությունը, վոր 1913 թ. հավասար եր 26 հազար տոննի, 1928-29 թ. հասնում է 165 հազար տոննի, իսկ 1929-30 թ. (ըստ. ծրագրի) պիտի լինի 254 հազար տոնն։ Նավթահորերը հերմետիզացիայի են յենթարկվում (գրա հետևանքով նավթից ստացվող բենզինն ավելանում է և 0,5%-ից հասնում է 5,7%): Շոգու տնտեսությունը մեռնում է և ամբողջ արտադրությունը ելեկտրոֆիկացիայի և յենթարկվում։ Նավթի գործածությունը, վորպես վառելիքի, խիստ կերպով ընկնում է. 1913 թ. նավթարդյունաբերության կարիքների համար գործ եր ածվել ամբողջ հանած նավթի 15,5%ը իսկ

1928—29 թ.—2,2%-ը: Հորափորումը նույնպես լիակատար վերաբառուցման և յենթարկվում ։ Շտանգային հարվածային հորափորումն ավանդության գիրկն և նետվում և փոխարինվում եւ պտուտային, կանատային ու տուրբինային հորափորումով: Հորափորման արագությունը խիստ ավելանում է, Յեռանդուն կորի և մղում հողի շերտերը ջրից վնասվելու և նավթահորերի ծուռ փորելու դեմ: Հորափորումը կատարվում և փորոշ պլանով, նոր կազմակերպված յերկրաբանա-տեխնիկական և յերկրաբանահետախուզական բյուրոների ղեկավարությամբ: Նավթի մշակման գործարանները բոլորովին նոր սարքավորում են ստանում: Հիմնվում են նոր գործարաններ, կառուցված տեխնիկայի վերջին խոսքով: Ինքը նավթամշակումը բոլորովին նոր նպատակ և հետամտում՝ վորքան կարելի և ավելի մեծ քանակով պարզ մթերք ներ ստանալ: Կազմակերպվում ու կենտրոնացման և յենթարկվում ավտոմոբիլային տրանսպորտը, հանքային շրջանների համար կառուցվում և նեղագիծ յերկաթուղի, Բագվից-Բաթում նոր հզոր նավթանցք և շինվում: Վերակառուցվում և ընդլայնվում եւ ելեկտրական կայանը, վորն իր ույժով Խորհրդային Միությունում յերրողն եւ:

22. Տասնամյա աշխատանքի հետևանքով նավթարդյունաբերության մեջ հետևյալ նվաճումներն ենք արել:

### Ա. Նավթահանման ասպարեզում

1913 թ. հանգել ե 7,358 հազար տոնն նավթ, 1920—21 թ. նավթահանումն ընկնում է, հասնելով 2,487 հազար տոննի: 1928—29 թ. հանգել ե 8,683 հազար տոնն նավթ, 1929—30 թ. ծրագրված է հանել 10,480 հազար տոնն: Խորհրդային իշխանության գրով նավթի արտադրությունը 1913 թ. հետ համեմատած ավելացել ե 42 տոկոսով, իսկ 1920 թվի հետ համեմատած—320 լացել ե 43 տոկոսով, իսկ 1928—29 թ. 165 հազար տոնն: 1929—30 զար տոնն զագ, իսկ 1928—29 թ. 165 հազար տոնն զագ: Թվին ըստ ծրագրի պետք է արտադրվի 254 հազար տոնն զագ: Աճումը հավասար է 870 տոկոսի: Եքսպլոատացիոն արժեքը վերջին հինգ տարվա ընթացքում ընկել ե 60 %-ով:

### Բ. Հորափորման ասպարեզում

1913 թ. 171,774 մետր նավթահոր և փորկել 1920—21 թվականին հորափորումը համարյա զագարում է, 1928—29 թ. նա հասնում է 320 հազար մետրի: 1913 թ. նավթահորերը փո-

րում եին համարյա բացառապես հարվածային ձևով (շտանգային հորափորում), 1928—29 թ. փորած 320 հազար մետրից միայն 3 հազար մետրն ե հարվածային ձևով փորկել (1 %-ը): 1913 թվին հորափորման համար միայն 26 պտուտային ստանոկ և յեղել, իսկ 1928—29 թ. յեղել և 286 հատ (ավելացել ե 11 անգամ): Հորափորման համար գործադրվող թանգարժեք խողովակների գործադրումը մի քանի անգամ պակասել եւ եքսպլոատացիոն հորափորման մեջ փորելու միջին ամսական արագությունն ավելացել ե. 1913 թ. նա յեղել և 30 մետր, իսկ 1928—29 թվին—85,2 մետր: Հորափորման ինքնարժեքը վերջին հինգ տարվա ընթացքում պակասել ե 40,4% (պտուտային հորափորման մեջ 50%): Հորափորման գործում մեծ փոփոխություն և մացնում Բագվի ինժեներ Ի. Ս. Կապելլուշնիկովի հնարած տուրբինային հորափորման նոր ձևը, վորը տեխնիկական կատարելագործումից հետո հորափորման գործի մեջ զդալի ուացիոնալիքացիա և մացնում: Ինժեներ Ակվորցովի և Շահնազարովի գուտարերի հետևանքով գտնված է հորերի ծովան դեմ կովելու միջոցը:

### Գ. Նավթի մշակման ասպարեզում

1913 թ. մշակվել ե 2,365 հազար տոնն նավթ, 1920—21 թ.—1,959 հազար տոնն, 1928—29 թ.—6,453 հազար տոնն, 1929—30 թ. պլանով—8,200 հազար տոնն, այսինքն 1913 թ. համեմատությամբ 250 %-ով ավելի, իսկ 1920—21 թվականի համեմատությամբ 310 %-ով ավելի: Նավթի մշակման բնույթը զգալի կերպով փոխվել ե. 1913 թ. ամենից արժեքավոր պարզ նավթամթերքներ (կերոսին, բենզին և ալն) նավթամշակման միջոցով ստացվել ե 34,25%, իսկ մազութ—64,5%, իսկ 1928—29 թ.—պարզ նավթամթերքներ ստացվել ե 45,6%, իսկ մազութ—53,2%: Կերոսին մշակող գործարանների ույժը 1924—25 թ. համեմատությամբ, ավելացել ե 2½ անգամ, իսկ նավթայուղի գործարաններինը—1¾ անգամ: Բագվում և Բաթումում կառուցված են և այժմ կառուցվում են մի շարք նոր գործարաններ ու ապարատուրա, վորոնք միանգամայն համապատասխանում են ժամանակակից տեխնիկական պահանջներին: Կառուցված ու կառուցվում են կրեկինդ գործարաններ, վորոնք 20 և ավելի տոկոս արտահանման ընդդին են տալիս (փոխանակ սովորական 2—6 %-ի):

23. Ազնեվթի գարգացման տեմպը անհամեմատ ավելի է, քան սկզբում նախագծված և յեղել հնգամյա պլանով: Որինակ

հնգամյա պլանով 1932—33 թ. յենթաղբարվում եր մշակել 10,323 հազար տոնն նավթ, իսկ մենք արդեն 1930—31 թվին գրանից ավելին կունենանք: 1932—33 թ. յենթաղբարվում եր հանել 11,244 հազար տոնն նավթ, իսկ մենք 1929—30 թ. կհանենք 10,480 հազար տոնն, իսկ 1930—31 թ.—13 միլիոն տոննից ավելի, այսինքն անհամեմատ ավելի, քան ծրագրված է յեղել 1932—33 թվականի համար: 1932—33 թ. հեռու ընկած շրջաններում ծրագրված է յեղել կատարել 23 հազար մետր հետախուզական հորափորում, իսկ 1929—30 թ. նոր շրջաններում փորփիլու և 30 հազար մետր, այսինքն ավելի, քան հնգամյակի վերջին տարին եր յենթաղբարվում:

Ժողովրդական տնտեսության զարգացման բուռն թափը, յերկրի ինդուստրացման ու գյուղի սոցիալիստական վերակառուցման հսկայական աճումը, արակտորների գործածության և ավտոմոբիլացին հաղորդակցության արագ զարգացումը, — այս ամենը մի շարք նոր պահանջներ և դնում նավթարդյունաբերության առաջ և նրան առաջարկում և մի շարք նոր անելիքներ: Այդ անելիքներից հիմնականներին են, զգալի չափով ավելացնել նավթահանման և նավթամշակման թափը, ավելի ևս ուժեղացնել պարզ նավթամթերք ստանալու տոկոսը (ի նկատի առնելով, վոր ահագին արագությամբ աճում է կերպուինի, լիգրուինի, տրակտորներ լուղելու նյութերի, ավտոմոբիլներում գործածվող բենզինի և այլն պահանջը, խիստ ուժեղացնել հետախուզությունը նոր շրջաններում, մեծագույն չափով ավելացնել հորափորման արագությունը, հետագայում ավելի ևս ուղիղալիքացիայի և սոցիալիստական վերակառուցման յենթարկել նավթարդյունաբերությունը, եփանացնել ինքնարդեքը և բարձրացնել արտադրողականությունը: Համապատասխան այս անելիքների Սպավթի 5.ամյա պլանը պիտի իրագործի 2½ տարում:

24. Խորհրդային իշխանության որով վոչ պակաս հզոր զարգացում ստացան Աղբբեջանի արդյունաբերության մյուս ճյուղը: Ըստհանուր առմամբ Աղբբեջանի արգյունաբերության ընդհանուր արտադրանքը 1923—24 թ. մինչև 1929—30 թ. (պլանով) բարձրացավ 572 տոկոսով: Առանձնապես պետք և մատնանշել, վոր մետաղարդյունաբերությունն աճել և 608%, կաշվեգործական արդյունաբերությունը—1,713%, կարի արդյունաբերությունը—2,213%, կենինի անվան գործարանն ավելացրել է իր արտադրանքը յերկու անգամ, ցեմենտի արդյունաբերությունը—2½ անգամ և այլն:

Աղբբեջանի արդյունաբերության մեջ աշխատող բանվարնե-

րի թիվն (առանց Ազնեվթի) 1925—26 թ. յեղել և 8000 հոգի, իսկ 1929—30 թվին հասել և 15 հազար հոգու: Նոր կատարած հիմնական ծախսերը 1925—26 թ. հավասար է յեղել 3,4 միլիոն ոսուբլու, իսկ 1929—50 թ. 12.2 միլ. ոսուբլու:

Եեթե մինչև վերջին ժամանակներս Աղբբեջանի ինդուստրացման հիմնական զարգացումն ընթացել է թեթև արդյունաբերության գծով, այժմ անագին ուշադրություն և դարձնվում ծանր արդյունաբերության զարգացմանը: Յերկրաբանա-հետախուզական աշխատությունները պարզեցին, վոր Դաշքեսանում (Գյանջալի շրջան) գտնվում է բարձր հատկության յերկաթահանքի մեծաքանակ պաշար: Նոր աշխատություն լավ տեսակի ծծմբա-կոլչաղանի մեծ պաշար կա Զրագիծորում: Այս հանգերի գոյությունը ստեղծում է բրուր նախադրյաները, Գյանջայում՝ խոշոր մետաղաձուլական գործարան կառուցելու և Աղբբեջանում խոշոր ծծմբաթթվակին արտադրություն ստեղծելու, վոր կծառալի ամբողջ Աղբբեջանին, մասսամբ ել հարավային Ռուսաստանին: Գյանջայում ծծմբագլում է նաև ջրանցքակին կառուցումներ անել և վոռոգման պարարտանալութի արտադրություն ստեղծել:

Աղբբեջանի ելեկտրոֆիկացիայի հարցը վերջին տարիներս զգալի կերպով առաջ է գնացել: Այժմ վերջնականապես վորոշված և Գյանջայում մեծ ույսնական հիգրոկայան կառուցել Կարա-Մալիկալի վրա, վոր 51 հագար կելովատ ուշի կունենա, իսկ մոտակա տարիների ընթացքում կրանցնվի և կհասնի 66 հազար կելովատի: Նույնու հիգրոկայանը (580 կելովատ ույժով) կառուցված վերջացած է և այս տարի կակավի նույնու յերկորդ հիգրոկայանի կառուցումը: Այս տարի կավարտվեն Դուբայի, Զաքաթալալի և Մտեփանակերտի հիգրոկայանները և կակավի Լենգորանի, Շամախու և Դյորչայի հիգրոկայանների կառուցումը:

25. Աղբբեջանի արդյունաբերության առաջ զրված անելիքները կիրագործվեն միայն այն պայմանով, յեթե լայն բանվորական մասսաները մեծ չափով մասնակցեն արտադրությունը կառավարելուն, բանվորներին համարձակորեն ու լայն չափով առաջ քաշեն՝ վեկավար տնտեսական աշխատանք տանելու, յեթե բանվորական մասսաների ակտիվությունն ինքնազործունեյությունը և ստեղծագործական ձեռներեցությունը զարգանա, յեթե հետագալում ավելի ևս աճեն սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը և յեթե խստորեն առաջ տարվի միանձնյա վարչությունը: Կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունները պետք է մեծագույն ուշադրություն դարձնեն Աղբբեջանի արդյունաբերության հետագա զարգացմանը:

Հնթացիկ տնտեսական տարվա սկզբում նավթարդյունառերության մեջ տեղի ունեցած քանակական ճեղքվածքներին վերջ տալուց հետո, մենք այժմ պետք ե ծածկենք այդ առաջին ամիսների պակաս թողածը և իրականացնենք վորակական ցուցանիշները՝ իջեցնենք ինքնարժեքը և բարձրացնենք աշխատանքի արտադրողականությունը։ Աղբբեջանի խորհրդայնացման տասնամյակի տոնին հաշվի առնելով մեր նվաճումները՝ միաժամանակ նա պետք ե արդյունաբերական-ֆինանսական պլանների իրագործման ու գերազանցման յելակետ ծառայի։

## II. ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

26. Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրան հաջորդած Աղբբեջանի ապրիլան հեղափոխությունը, վորը հաստատեց պրոլետարիատի դիկտատուրան, հիմնովին փոխեցին գյուղական տընտեսության զարգացման պայմաններն ու ընթացքը։

Հիմնովին փոփոխվեցին հողային հարաբերությունները. գյուղի տնտեսական ձևերի զարգացման նոր տիպ, նոր ուղղություն ստեղծվեց։ Զունկորին հասցրած ամեն տեսակի ոգնությունը, միջակին աշակեցին ու նրա ամրանալը, կուլակային տարրերի դեմ մղած կոփելը—ապահովեցին սոցիալիստական սեկտորի զարգացումը գյուղական տնտեսության մեջ։

Մինչխորհրդային Աղբբեջանի հողային հարաբերությունները բնորոշվում եին նրանով, վոր մի կողմից, գյուղացիության վրա անսահմանորեն իշխում եին բեկը, խանը, աղալարն ու կալվածտերը, վորոնց պաշտպանում եին վոստիկանական ապահուածն ու որենքը, իսկ մյուս կողմից, գոյություն ուներ ձնշված, ամեն տեսակի հիվանդություններով (սիֆիլիսով, տրախոմայով և այլն) վարակված, համարյա ամբողջովին անդրագետ, տնտեսապես ու քաղաքականապես իրավագուրկ գյուղացիությունը։ Աղբբեջանի գյուղական տնտեսությունը չափազանց հետամնաց եր, վորովհետև գյուղություն ունեին բազմաթիվ կալվածտիրական, խան-բեկական տիրապետություններ, զանազան տուրքեր, հողամասերը չափազանց անհավասար եին բաժանված առանձին գյուղական համայնքների մեջ, գյուղացիական հողոգտագործման ձևերն անկանոն ու անհարմար եին (հողամասերը գյուղից հեռու եին ընկած, իրարից կարգած և այլն)։ Տնտեսության բոլոր ճյուղերն եքստենսիվ բոնություն կրում։ Դաշտաբուժական սիստեմը կանոնավորված չեր, դաշտերի մշակման տեինիկան չափազանց հետամնաց եր, մշակման գլխավոր գոր-

ծիքներն եին խիշն (արորը) ու ցաքանը, բերքատվալթյունը չափազանց ցածր եր և հաճախ չեր ծածկում գյուղացու արած ծախսերը։

Գերակշռում եր քոչվորական անամնապահությունը, վոր մշտական կերպով բավականաչափ ապահովված չեր։ Սրանից հետեւում եր անասունի ցածր վորակը. անասունն ազնվացեղ չեր, մանր եր և քիչ արտազրոյ։

27. Իմպերիալիստական պատերազմ, ազգամիջան ընդհարումներն, անարխիայի տարիներն ու մուսավաթիստների տիրապետությունը ցնցող աղբեցություն գործեցին գյուղական տընտեսության վրա։

Մուսավաթիստների ու դաշնակների վառած ազգամիջան պատերազմի հրդեհն Աղբբեջանում վերջնականապես քայլքայեց գյուղական տնտեսությունը՝ թալանի ու կործանման յենթարկելով ամբողջ ուայններ։

Մուսավաթի դիկտատուրայի որով մի քանի դավաներում ազգաբնակության քանակը նախապատերազմական ժամանակի հետ համեմատած կրճատվել է համարյա 20 տոկոսով։ Դյուլական ազգաբնակությունը պակասել է ավելի քան 350 հազար հոգով։ Տասնյակ հազար շենքեր քանդվել ու այրվել են, ավելի քան 280 բնակված վայր գատարկվել են։ Դրա հետևանքով՝ Աղբբեջանում համարյա բոլորովին գաղաքեցին բարեվակ ցանել (1921 թ. —500 դեմքատին)։ Չեղամապահությունն անհետացավ, պաղատուծառերի ու խաղողի արգիները քանդվեցին, այրվեցին ու անխնամ մնացին։ Անամսապահությունը, մանավանդ գոչխարաբուծությունը ավելի քան լիրկու անգամ կրճատվեց։ Արտադրության միջոցները վոչնչացման կամ լիակատար անպետքության մատնվեցին։ Խորհրդային իշխանության նախորդակին բոլոր գյուղացիական տնտեսությունների միայն 8 տոկոսը գյուղատնտեսական գործիքներ ուներ։ Յեթե դրան ավելացնենք, վոր հողային հարաբերությունները խստ խճճված եին, գյուղացիների և բեկերի ու խաների հարաբերությունները չափազանց լարգած, թուրքերի և հայերի մեջ ազգային անտոգոնիզմ եր տիրում, իսկ ուրիշ ազգային փոքրամասնությունները քայլքայված եին, —այն ժամանակ աղբբեջանական գյուղի պատկերը խորհրդայնացումից առաջ լիակատար կլինի։

28. Բնական և, վոր մուսավաթիստների քայլքայած Աղբբեջանի գյուղական տնտեսությունը կոմունիստական կուսակցության ու խորհրդային կառավարության առանձին հոգատարության առարկա դարձավ։ Խորհրդային կառավարությանը, մանավանդ վեր-

Հին ժամանակներս, բացառիկ ուշադրություն դարձրավ գյուղական տնտեսության վերականգնման, գյուղացիների կուլտուրացիալական կենցաղի և գյուղական տնտեսությունը նոր սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու խնդիրներին: 1920 թ. մայիսի 5-ի դեկտեմբերի բոլոր հողերը գյուղացիությանը արվեցին՝ ողագործելու համար: Մինչև 1920 թ. վերջը գյուղացիներին 582,000 հեկտ. հող արվեց: Մասնավոր-կալվածատիրական մնացած հողերը գյուղացիներին բաժանեցին 1921 թ.: Գյուղացիությունն ընդամենը մինչև 1 միլիոն հեկտար բեկական ու կալվածատիրական հող ստացավ:

Վճռականապես վերջ տալով անցյալ աշխատանքների թերություններին, մասնավորապես չուներների մեջ տարկող աշխատանքի թերություններին, կուսակցությունն ու խորհրդակին իշխանությունն ապահովում են գյուղի սոցիալիստական շինարարության հաջողության պայմանները:

1922 թ. դեկտեմբերի 9-ին Ազգային կենտրոնակոմը հասատեց աշխատանքային հողոգագործման կանոնադրությունը, վորը վարուում ե հողոգագործման կարգն ու ձևերը, իսկ 1923 թ. հունիսի 15-ին Ազգային կոմիտեի հաստատեց Խորհրդակին Ազգային կողային կոդեքսը, վորն ընդդրկեց աշխատանքային հողաշինարարության կանոնադրությունը և հանրապետության ամբողջ հողային որենսդրությունը:

Սակայն այս բոլոր միջոցները հողով ամբողջովին չապահովեցին չունեոր ու միջակ գյուղացիական մասսաներին: Հողային հարաբերությունները կարգավորելու համար 1923 թվականից սկսվեցին ներգյուղային և միջդյուղային հողաշինարարական աշխատանքները, վորոնք շարունակեցին մինչև վերջին ժամանակներս: Ի նկատի առնելով, վոր կուլակային տարրերը մեծ քանակությամբ ավելորդ հողեր ունին, կուսակցությունը վերջին տարվա ընթացքում շրջաններում ավելորդ հողերը հետ վերցնելու քաղաքականություն և տանում: Այս ճանապարհով չունեոր ու միջակ գյուղացիները, վորոնք բավարար քանակությամբ հող չունեին, մի քանի հազար հեկտար լրացուցիչ հող ստացան:

29. Իր տասնամյա գյուղության ընթացքում խորհրդային իշխանությունն Ազգային անունում ահազին աշխատանք և կատարել գյուղական տնտեսության բոլոր ձևուցելում:

Գյուղական տնտեսության արտադրականությունը բարձրաց նելու և համայնքաման տեմպն արագացնելու նախապայմաններից մեկն է՝ հազարին տերիտորիայի կազմակերպումը, այն և

հողաշինարարությունը, մելյորացիան ու վերաբնակեցումը: Մեծ կործ և կատարված կոլխոզների, սովխոզների ու չքավոր-միջակային մասսաների հողաշինարարության համար:

Մելյորացիայի բնագավառում աշխատանքներ են կատարված ինժիներական-վորոպեման սիստեմի ու ջրհանների վերականգման համար, վոր քանդված են մինչև խորհրդաշնացումը: Նշված ու մասամբ կատարված են Մուղանի, Միլի և մյուս ու լայնների գաշտերը վոստելու գործերը:

Տեղական արևելով ջրվող հողերի տարածությունը, վոր 1921 թվին 242 հազար հեկտար եր, 1927-ին 367 հազար, 1929-ին հասել ե 508 հազարի:

Ինժիներական սիստեմներով ջրվող հողերի տարածությունը 1917 թվին յեղել ե 50 հազար հեկտար՝ իսկ 1930-ին՝ մոտ 60 հազար: Մինչև պլատերազմն Ազգային գործել ե 140 ջրհան, 1921-ին գործող ջրհանների թիվը յեղել ե 58, իսկ 1930-ին՝ 120, չհաշված նոր շինուալիները:

Վերջին տարիների ընթացքում Ազգային գործառնում մի շարք խոշորագույն աշխատանքներ են կատարված ջրային սիստեմների վերակառուցման համար՝ նախազծեր և ուրվագծեր կազմելու վերաբերմաբությունը: Մուղանի վոստելումը վերակառուցելու-զարգացնելու և Միլի ու Մուղանի գաշտավայրերը վոստելու յերեք հեկտարական ջրամբարներ հիմնելու հոյակապ նախագիծն և կազմված: Վերջին նախազծի համաձայն՝ Արաքսը 200 հազար հեկտար ջրելու փոխարեն՝ կջըի մոտ 500 հազար հեկտար:

Խորհրդաշնացումից հետո հանրապետության տերրիտորիայում վերաբնակեցված ե 10 հազար տնտեսություն, 50 հազար նորաբնակներով:

Բոլոր վերաբնակածներին ոգնություն ե ցույց տրվել ագրոկուլտուրական ուժերով և բժշկական միջոցներով, ինչպես և տրվել են անհրաժեշտ գյուղատնտեսական ինվենտար, սերմեր, կառուցողական նյութեր ու անհրաժեշտ վարկ:

30. Խորհրդաշնացումից հետո յերկրագործության բնագավառում նշանավոր հաջողություններ են յեղել:

Հանրապետության ընդհանուր ցանքային տարածությունը, վոր 1921 թվին յեղել ե 560 հազար հեկտար, 1929-ին հասել ե 1 միլիոն 65 հազարի, այսինքն զրեթե յերկու անգամ ավելացել ե:

Տեղական կուլտուրաների տարածությունը 1914 թվին յեղել ե 9 հազար հեկտար, 1929-ին—123 հազար, 1930 ին այդ

տարածությունը մինչ-պատերազմիանի համեմատությամբ 40  
անգամ ավելի կլինի:

1921 թվին յեղել և 101 հազար ձի, 1930 ին այդ թիվը հա-  
սել է 187 հազարի: Խոշոր յեղջուրավոր անասունների թիվը  
887 հազար 500 ից հասել և մի միլիոն 471 հազարի, վոչխար-  
ներն ու այծերը մի միլիոն 7 հազարից՝ 3 միլիոն 32 հազարի:

Անասնապահության զարգանալուն նպաստել է հանրապե-  
տությունում անասնաբուժական ողնության կազմակերպումը,  
ժանդախտի ու ամեն տեսակ վարակիչ համաճարակների, որի-  
նակ սիրիոզախտի, յեղջուրավոր անասունների համաճարակ թո-  
քերի բորբոքման, սապի և այլ հիվանդությունների դեմ տար-  
վող պայքարը:

Պարսկական ամբողջ սահմանագծով անասնաբուժական-սա-  
նիտարական կետեր են կազմակերպված, պահպանողական-կա-  
րանտինալին գիծ և ստեղծված, ինչպես և գավառակային-անաս-  
նաբուժական ցանց և կազմակերպված Ադրբեյջանի բոլոր շրջան-  
ներում:

Ահազին աշխատանք և կատարված նույնպես և անտառա-  
յին տնտեսության, խաղողաբուծության ու գինեգործության,  
այգեգործության ու բանջարաբուծության, ձկնային տնտեսու-  
թյան, շերամապահության ասպարեզում և այլն:

Գյուղական տնտեսության բոլոր ճյուղերում արդեն նշա-  
նափոր չափերով անցել ենք մինչպատերազմյան չափերից:

31. Ահազին աշխատանք և կատարված ժամանակակից գի-  
տության և տեխնիկայի նվաճումները գյուղական տնտեսության  
մեջ գործադրելու համար: Յեթե մինչ հեղափոխությունն Ադրբե-  
յանում առնասարակ փորձնական-հետազննական հիմնարկու-  
թյուններ գոյություն չունեին, ապա խորհրդայնացման 10-ամ-  
յակին Ադրբեյջանը փորձական գործի կազմակերպման կողմից՝  
Անդրկովկասում առաջին տեղերից մեկն և բռնում:

Ադրբեյջանի Խոխանության 10 տարիներում  
կազմակերպված և 21 փորձնական հիմնարկություն տնտեսու-  
թյան բոլոր ճյուղերի վերաբերմամբ՝ 35 գիտական-փորձնական  
բաժիններով:

Զարգացրած և ոլլերենությանական կալարանների ցանցը  
(84 կայարան):

Փորձնական հիմնարկությունների անձնական կազմը ներ-  
կայում հասնում է 470-ի, վորոնցից 215-ը գիտական ու տեխ-  
նիկական գործիչներ:

Պակաս ուշադրություն չի յեղել գարձված ազրո-ոգնության  
և ազրո-պրոպագանդի հարցերին, ինչպես և գյուղական բնակչու-  
թյան լայն ազրոնումիզացիայի հարցերին:

Մինչև հեղափոխությունն Ադրբեյջանում ընդամենը 60  
գյուղատնտես և յեղել Միայն խորհրդայնացումից հետո և, վոր  
գյուղատնտեսն սկսում ե գյուղի կյանքում դեր խաղալ:

Յեթե 1921 թվին խորհրդային գյուղատնտեսների թիվը  
15-ից չի անցել, ապա 1930-ին գյուղատնտեսների թիվը հասել  
է 250-ի:

Տաս տարվա ընթացքում գյուղատնտեսները կազմակերպել  
են 2000-ից ավելի ցուցական հողամասեր, մոտ 3000 դասախո-  
սություն են կարդացել և գյուղական տնտեսության վերաբերող  
կարճ ժամանակուական կուրսերն անցել ե 10 հազարից ավելի գյու-  
ղացի: 1930 թվին գյուղատնտեսական պատրաստություն և տըր-  
ված 30 հազար գյուղացու: Ամեն տեղ գյուղացիության շարքե-  
րում գյուղատնտեսական անդրագիտությունը վերացնելու, ագ-  
րոմինիմումը կատարելու աշխատանք և տարվում և այլն:

Խորհրդայնացումից հետո շատ ուժեղացել և գյուղատնտե-  
սական մեքենա ու գործիք մատակարելու գործը: Կուսակցու-  
թյունն ու Խորհրդային իշխանությունն գործով սոցիալիստական  
արդյունաբերության և գյուղական տնտեսության միջև արտա-  
դրական կապ են ստեղծում:

Յեթե 1921 թվին Ադրբեյջանում յեղել է 30 հազար յերկա-  
թե գութան, ապա 1930 թվին գրանց թիվը անցել է 60 հազա-  
րից. յերկաթե ցաքանների թիվը յեղել և մոտ 6 հազար, այժմ  
13 հազարից ավելի ե: Զանազան ցանչչներ յեղել են 800, այժմ  
3 հազարից անց ե: Յեթե մինչև 1920 թիվը Ադրբեյջանը բոլորո-  
վին չկիտեր, թե ինչ է տրակառը, այժմ ունի մոտ 120:

Վերջապես Ադրբեյջանում լայնորեն ծավալված և յեղել պայ-  
քարը վասարուների դեմ:

32. Ադրբեյջանի գյուղական տնտեսությունը վերակառուցե-  
լու գործում մեծ դեր է խաղացել գյուղացիության չքավոր-մի-  
ջակային խավերին վարկ բաց թողնելը:

1923—24 թվին վարկ բաց թողնելու և կոնտրակտացիայի  
կարգով գյուղացիությունը տրվել է 390 հազար բուրքի. 24—25  
կարգով գյուղացիությունը տրվել է 836 հազար, 1925—26 թվին՝ 3 միլիոն 167 հա-  
թվին՝ 2 միլիոն 836 հազար, 1925—26 թվին՝ 3 միլիոն 167 հա-  
զար, 1926—27 թվին՝ 4 միլիոն 553 հազար, 1927—28 թվին՝ 9  
միլիոն 268 հազար, 1928—29 թվին՝ 8 միլիոն 545 հազար,

1929—30 թվին—15 միլիոն 608 հազար, իսկ 1930—31 թվին  
պետք է տրվի 36 միլիոն 726 հազար բուբլի:

Զհաշված բնակչության միջոցները՝ գյուղական տնտեսու-  
թյան բոլոր աղբյուրների մեջ և մատրված:

1928—29 թվին 19 միլիոն 500 հազար բուբլի.

1929—30 » 42 միլիոն բուբլի:

Բնակչության ու ձեռնարկությունների միջոցների հետ  
միասին մատրված և 60 միլիոն բուբլի, 1930—31 թվին գյուղա-  
կան տնտեսության մեջ մատրված փողի գումարը կհասնի 270  
միլիոն ռուբլու, վորից բնակչության ու ձեռնարկությունների  
մատրվածը՝ 59 միլիոն բուբլի:

Վերջին տարիներս գյուղացիությունը քաշված է լեզել բո-  
լոր տեսակի գյուղատնտեսական կոոպերատիվների մեջ: Մի շարք  
ուսունական բաժակարգին ընկերությունների մեջ են քաշված  
ուսունական գրեթե բոլոր տնտեսությունները: Աղբեկանի գյուղա-  
ցիական տնտեսությունների մեծ մասը քաշված է սպառողական  
կոոպերացիայի մեջ:

33. Կոոպերացման գործի հաջողությունների ու պլոյետա-  
րական պետության կողմից գյուղացիությանը ցուց տված ար-  
տադրական ոգնության աճման շնորհիվ աճել է չքավոր ու մի-  
ջակ մասսաների ձգտումը կողմեկտիվ տնտեսություն մտնելու,  
ըստ վորում առանձնապես աճել է գյուղական տնտեսության  
սոցիալիստական ճյուղն ներկա ցանքսային կամպանիայի ժա-  
մանակ:

Տեղերում կատարված սխալների հետեւնքով տնտեսու-  
թյունների մի մասը հեռացել են կոլխոզներից և 1930 թվի ապ-  
րիլի 10-ին կոլխոզներում ֆնացել ե 50 հազար առտեսություն,  
կամ Աղբեկանի բոլոր տնտեսությունների 15%-ը:

Տեղերում կոլխոզային շարժման կամավոր լինելը խախտել  
են ու կոլխոզների ստորին ձևերից թոել բարձրագույններին.  
այդ սխալները լիկիդացիայի լենթարկելով կուսակցությունը  
ու Խորհրդային իշխանությունը կապահովեն գյուղական տնտե-  
սության վերակառուցման հաջողությունները:

Միաժամանակ աճում ե և սովորացին շինարարությունը:  
Բացի Աղբեկանում գյուղություն ունեցող 15 սովորացին 1930  
թվին պետք է աշխատեն մի շարք նոր՝ բարձրակի, կենափի,  
վոչխարապահական, մաս-կաթնա-տնտեսական, բանջարանոցային  
պտղաբուծական և ուրիշ սովորացներ:

1930 թվի գարունքից սկսել են աշխատել յերկու մեքենա-  
տրակտորային ռուբեղ կայաններ:

Գյուղական տնտեսության բարձրանալը, կապված իր սո-  
ցիալիստական վերակառուցման հետ՝ կարգացնե նրա հետա-  
մնացության վերացումը և ամենաարժեքավոր հում նութերով  
կապահովե վոչ միայն Խորհրդային Աղբեկանի, այլ և ամրող  
Խորհրդային Միության բուռն թափով զարգացող սոցիալիստա-  
կան արդյունաբերությանը: Բացի արդեն արտադրվող բամբա-  
կից ու կենափից՝ Աղբեկանու մ պետք է զարգացնվեն մի շարք  
արեալարձային բույսեր, առաջին հերթին՝ կառչուկ տվող բույ-  
սեր, վորովեսպի Խորհրդային Միությունն ազատվի արտասահմա-  
նից կառչուկի վերաբերմանը կախումն ունենալուց:

Բայց այդ վերելքը հնարավոր և միայն կուլակության դեմ  
պարզաբ մղելով: Ներկայում գյուղամ նկատվող գասակարգային  
սրված պարզաբ պահանջում և ամեն կերպ կազմակերպել բատ-  
րակներին ու չքավորներին՝ միջակների հետ միացած՝ կուլակի  
դեմ կուլու համար:

Կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը գյուղա-  
կան տնտեսության սոցիալիստական ճյուղ զարգացնելով՝ առան-  
ձին ուշագրություն են դարձնում չքավորներին կազմակերպելու  
և նրա ու միջակի գաշինքն ամրապնդելու գործին՝ պայքարելու  
կուլակի և նրա այն փորձերի գեմ, վոր կուլակն անում և գյու-  
ղում սոցիալիստական շինարարությունը քանդելու համար՝ սահ-  
մանափակելով նրա շահագործական ձգտումները, և նրան, վոր-  
ում գասակարգի գոչնչացնելով ամբողջապես կուլեկտիվացնվող  
սոյնուններում:

Գյուղի հիմնական միջակ մասսաների հետ կռած հաստա-  
տուն գաշինքի հիմունքով, վճռականորեն հաղթահարելով կու-  
սակցական գծի աղավաղութերը ցըսում և արմատից գուրս  
պոկելով միջակի վերաբերմանը լոկ վարչական միջոցներ գոր-  
ծադրելու ամեն մի փորձ, կուսակցությունն ու Խորհրդային իշ-  
խանությունն իր համար խնդիր և գնում ներկա գյուղատն հսա-  
կան կամպանիայում՝ շարունակել ցանքսային տարածության  
ընդարձակումը, տնտեսապես ամրապնդել արդեն ստեղծված կոլ-  
խոզները՝ բատրակ-չքավոր-միջակ մասսաների ակտիվության  
մասսական աճման, գյուղական տնտեսության աղբանքայնու-  
թյան բարձրացման հիմունքներով:

### III. ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԵՅՈՒՄ

34. Ազրբեջանի աշխատավոր մասսաների կուլտուրան, վոր յարիզմի ժամանակ հալածվում էր ամեն կերպ, բուռն կերպով ծաղկել և միայն մուսավաթիստներին տապալելուց ու պրոլետարական գիկտատուրա հաստատելուց հետո:

«Մեր հայրենիքի սահմաններում ապրող բոլոր ազգերի կրթության վերջնական նպատակը անպայման պետք է լինի նրանց ուսուցումն ու ձուլումն ուսւածողության հետ».—ասում էր ժողովրդական կրթության ցարական մինչառության կարգադրությունը:

Միմիայն Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատեց տռանձին ժողովրդներին այդ վիճակից, հնարավորությունն տվավ նրանց կուլտուրայի զարգացման և բոլոր ազգությունների համար կարելի դարձրագ իրանց մայրենի լեզվից ողափելու՝ հասարակական ու պետական ամրող կյանքում:

Խորհրդային իշխանության պայմաններում՝ ազգային կուլտուրայի շինարարությունը սերտ կապված է Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի կառուցելու հետ. «Պրոլետարական կուլտուրան, վոր իր բովանդակությամբ սոցիալիստական և, արտահայտության գանապան ձեր ու միջոցներ և ընդունում սոցիալիստական շինարարություն քաշված զանազան ժողովուրդների մէջ նայած լեզվի, կենցաղի և այլ տարրերություններին: Պրոլետարական՝ ըստ բովանդակության, ազգային՝ ըստ ձեր՝ այսպես է այն համամարդկանուն կուլտուրան, դեպի վորը տանում և սոցիալիզմը» (Ստալին):

1920 թվի մայիսի 12-ին հայտարարվել են խորհրդային իշխանության հիմնական սկզբունքները՝ Ազրբեջանի ժողովրդական կրթության ասպարեգում:

Թէ միջին և թէ բարձրագույն գվարոցների հին, ալլանդակ տիպը կփոխարինվի պոլիտեխնիքականով—պրոֆեսիոնալ կրթության կատարելագործված ձևով: Դասավանդումը մայրենի լեզվով կատարվի և նարավորության չափով՝ տղաներն ու աղջիկները միասին կոռփորեն: Դպրոցն վոչ միայն մատչելի կղաման, այլ և պարտադիր, ազատ անցումով մի աստիճանից մյուսը: Ազնատավորներին Խորհրդային Ազրբեջանի բոլոր դպրոցները մացնելու համար՝ վերացվում է վորեն ուսման վարձ:

Այդ խնդիրները, մասսայական անգրագիտությունը վերացնելու հոգածության հետ միասին՝ անցած տաս տարիներում կա-

ռավարության և ժողովրդական կրթության որդանների գործունելության հմաք են կազմել. զեռ Ազրբեջանի խորհուրդների 1-ին համագումարը առաջազրել է «Երրոր կառավարական որդաններին, ինչպես որենք ամենամեծ ուշագրությունը գարձնեն լուսավորության որդաններին և նրանց ամեն մի կարեքը բավարեն առաջին հերթին»:

35. Խորհրդային հանրապետությունը ցարական իշխանությունից մասսայական անգրագիտություն և ժառանգել: Ներկա Ազրբեջանի բանած տերրիտորիայի վրա ցարական կառավարության ժամանակ գլագիտության տոկոսը կրիայի քայլերով և բարձրացել. 20 տարվա մեջ (1897 թվից մինչև 1917 թիվը) 6,3 տոկոսից զառել է 9,3 տոկոսի, իսկ զուրում զրեթե առանց բացառության բոլորն անգրագետ են լեզվել: Անգրագիտությունը վերացնելու աշխատանքը կատարելով 1921 թվից մինչև 1930 թ., այսինքն 10 տարվա ընթացքում այդ տոկոսը զրեթե 3 անգամ ավելացել է, 11,2 տոկոսից համեմով 30 տոկոսի:

1914—15 թվին Ազրբեջանում տարրական դպրոցների թիվը է յեղել 942, աշակերտաներինը՝ 62 հազար 788, դպրոցների թիվը՝ 1919—20 թվին իջել հասել է 643-ի, իսկ աշակերտաներինը՝ 78 հազար 78-ի:

Խորհրդայնացման մոմենտից պարտադիր ուսում մտցնելու հաստատուն ուղղությունն է վերցնվում և զպրոցների ցանցը սկսում է աճել բուռն թափով (այս տարի դպրոցների թիվը է 1479, աշակերտաներինը՝ 188 հազար 296), 1928 թվին Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նասաշրջանը գեկրետով հաստատում է ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու ժամկետները ժամկետով ամբողջ տնտեսության աճման ընդհանուր թափի ու բնակչության համապատասխան չափով՝ աճած կուլտուրական պահանջների հետևանքով՝ Ազրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի սահմանած ժամկետները (1936—37) զանդազ են համարվում և ամբողջ հանրապետությունում ընդհանուր պարտավորությունը տարի ուսում մտցնելու տարի և ընդունվում 1932—33 թիվն, այսպիս, վոր հենց առաջիկա տարում ընդհանուր ուսում մտցնվի բոլոր քաղաքներում, ֆուբրիկ-գործարանային շներում ու ամբողջապես կոլլեկտիվացնվող ուայոններում:

36. Զկա ժողովրդական կրթության մի ընակավառ, վորածեղ ցարիզմն ու մասավաթական կառավարությունն այնպիսի վորորմելի ժառանգությունն թողնեին, ինչպես պրոֆեսիոնալ կրթության բնագավառում:

Պրոֆեսսիոնալ-կրթական հիմնարկությունների ցանցը չընշին և յեղել (ընդամենը—չորս), տեխնիկական գիտելիքները պարուցից գույքու տարածելու գործը բոլորովին կազմակերպված չի յեղել: Բնակչության ընդհանուր անգրագիտությունն ու տղիւտությունը համապատասի անել և ել ավելի տեխնիկական անգրագիտությանը: Դրանով և բացարձում աշխատանքի արտադրականության չափազանց ցածր լինելը:

Տեխնիկական գրագիտությունը բարձրացնելու համար բաղմատեսակ զպրոցական հիմնարկությունների ցանց և ծավալվել ակամած բարձրագույն զպրոցներից ու տեխնիկումներից մինչեւ ֆաբրիկ-գործարանային աշակերտության զպրոցներն ու բազմաթիվ կարճժամանակյա ու յերկարժամանակյա կուրսերը:

Այժմ գոյություն ունին 5 բարձրագույն զպրոցներ՝ 5518 ուսանողներով, 40 տեխնիկում՝ 10,000 ուսանողներով և զանազան դպրոցական հիմնարկություններ, վորտեղ սովորում են 10,507 հոգի: Անցած տարիները բաց են թողնված 2,221 բարձր վորակի ու 3,401 ել միջին վորակի մասնագետներ:

Բարձրագույն զպրոցների պրոյետարացման վրա առանձին ուշադրություն է դարձրված: Սովորող բանվորների ու գյուղացիների տոկոսը տեխնիկումներում հավասար է 62,4 տոկոսի, բարձրագույն զպրոցում՝ 56,7 տոկոսի:

Սոցիալական կազմի հետագա բարելավումը պետք է շարունակվի անշեղ կերպով, թոշակներով ու կոնտրակտացիայով լիովին ընդգրկելով պրոլետար և չքավոր ուսանողներին:

37. Կառավարության դեկլարացիայի համաձայն՝ մալթենի լեզվով զպրոցի սկզբունքը ավելի ու ավելի լայնորեն է իրադրվում: Յեթե մուսավաթական կառավարության ժամանակ գաղափարներում 2—3 լեզվով և տարրել, ապա այժմ 11 ժողովուրդների մալթենի լեզվով զպրոցներ կան: Հետամիաց ժողովուրդների համար լատինական ալբուրենով սիմական դիր և ստեղծված ու հատուկ գասազրքեր են տրամադրված:

Նույնպես միջոցներ են ձեռք առնված, վորպեսզի ազգային փոքրամանությունները լիովին առաջնորդեն մայրենի լեզվով տարրող միկայաններով ու քաղկրթական հիմնարկությունների ցանցով:

38. Թուրք աշխատավորների կուլտուրական ուժերի և տընտիսական կյանքի կատարյալ զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով ձեռնարկված ե թուրքերեն լեզվով բարձրագույն զպրոց ստեղծելու գործին: Այդ նպատակով միջոցներ են

ձեռք առնվաւում թուրքերեն լեզվին տիրապետող գիտական գործիչների կազմության պատրաստելու:

Յեթե մուսավաթի ժամանակ թուրք զիտական գործիչներ բոլորովին չկային, առաջ խորհրդակին իշխանության դուռը յան 10 տարիներում մենք արդեն 200-ից ավելի թուրք զիտական գործիչներ ունենք:

Թուրքիկացիայի հաջողությունները յերկում են հետեւալ թվերից:

Բարձրագույն զպրոցների ակադեմիական պերսոնալի կազմում թուրք զիտական գործիչների թիվն ե.

Աղբը. Գիտական համալսարանում	—67 հոգի (42,2%)
» Պոլիտեխնիկական ինստիտուտում	—34 » (20,6%)
» Գյուղատնտեսական	» —19 » (26,8%)
» Պետ. Գիտական և Հետազոտ. ինստի-	
տութում . . . . .	—28 » (51%)
» Բարձրագույն Մանկավարժական	
ինստիտուտում . . . . .	—34 » (90%)

Բարձրագույն մանկավարժական ինստիտուտում դասավանդումը ամբողջապես թուրքերեն ե, այդպես և մասամբ ել Աղբը-բեջանի պետական համալսարանում, դասավանդման թյուրքիզացիա և պատրաստում զյուղատնտեսական ինստիտուտում և Աղբը-բեջանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում:

39. Աղբը-բեջանի պարմաններում առանձին նշանակություն է ստանում կանանց զպրոցական հիմնարկությունների մեջ քաշելը: Այդ կողմից մեր ունեցած հաջողությունները ընտանիքում կատարված բեկումն են ցուց տալիս: Բոլոր տեսակի զպրոցներում աղջիկների ընդհանուր թիվը հասել է 99 հազար 303-ի, վորոնցից 40 հազար 89-ը թրքուհիներ են (1914-15 թվի հունվարի թյուրքի պարմանների մասում 310%-ի, իսկ թրքուհիներինը՝ 1839,7%):

Լայնորեն ծավալվել է քաղլուտվարների գործունելությունը, վորոնք բնակչության խորքերը թափանցող մասսայական հիմնարկությունների միանգամայն նոր կատագորիաներ են ստեղծել: Գրադարանները, խրձիթ-ընթերցարանները, կինոն ու ուղղիոն զյուղերում կավարւալի ու հառաջադիմության հզոր հաղորդիչներ են գարձել: Քաղլուտվարների հիմնարկությունների պահպանուր ցանցը հավասար է 596-ի, բացի 90 կինո-ապարանից ու Աղբը-բեջանի շրջաններում յեղած 300 ուղղուկետերից:

40. Անցած տարիների հիմնական նվաճումներից և թուրքական նոր այրուբենը, վոր չափազանց հեշտացրել և թուրքեն գրել-կարդալու ու լուրացնելը:

Թուրքերեն նոր այրուբեն մացնելը, վոր լենինի արտահայտությամբ՝ նշանակում և հեղափոխություն Արևելքում, մուսավաթների և թուրք հին ինտելլիգենցիայի միջից իրանց կողմնակիցների խառն գիտադրության են հանդիպում, լորովինեան նրանք նոր այրուբենում խառնի պատմական հետամնացությունից ու արելցան արագիցիաներից հրաժարվելն են տեսնում:

Նոր այրուբենի նշանակությունը յնքեռում և հետեւալ թվերից:

Լիովին նոր այրուբենին անցնելուց՝ Աղրբեջանի Պետհատի հրատարակչական գործունեյության աճումը միանգամբց սուր թուշք և անում և 1928 թվի 1 միլիոն 95 հազար տիրաժից՝ 1929 թվին համառ 1 միլիոն 636 հազար որբնակի:

Թուրքերեն հրատարակված դրերի ընդհանուր քանակությունն և 8 միլիոն 517 հազար որբնակ (գորից 3 միլիոն 445 հազար—նոր այրուբենով), զա ցույց է տալիս ընթերցող բնակչության թվի աճումը: Մի քանի անգամ ավելացել և թուրքերեն լեզվով հրատարակվող թերթերի ու ժուրնալների թիվը:

Նոր այրուբենի անցնելը մի ավելորդ անգամ ցույց տվավ Աղրբեջանի ու նրա պրոլետարական մայրաքաղաք Բագվի առաջնորդող դերը վոչ միայն Խորհրդացին Միության, այլ և արտասահմանա Արևելքի թուրք ժողովարդների համար: Այդ այրուբենն Աղրբեջանից հետո ընդունվում և Խորհրդացին Միության բայր թուրք ժողովուրդների կողմից: Դրանից հետո նոր այրուբենին անցնելու հարցը դրվում է Տաճկաստանում և այլն:

41. Կառուվարությունը մեծ ուշադրություն և գարձրել գիտական սիրտը զարգացնելու ու գիտական նվաճումները գործականում կրկանելու վրա: 10 տարում գիտական-հետազոտական և գիտական-գործնական հիմնարկությունների թիվը 9 կետից հասել և 100-ի:

Գիտական-հետազոտական աշխատանքը զարգացել և թերարձույն զարգացական հիմնարկություններում, թե ինքնուրույն գիտական հիմնարկություններում ու գիտական ընկերություններում: 1920 թվին գոյություն և ունեցել 2 ֆակուլտետ, իսկ այժմ մենք ունենք Աղրբեջանի պետական համալսարանի, Աղր. պոլիտեխնիքական ինստիտուտի, գյուղատնտեսական ինստիտուտի 12 ֆակուլտետները, վորոնք 10 տարում գիտական—

ուսումնական գործունեության հետ միասին՝ հետազոտական ինստինսիվ աշխատանք են զարգացրել ու ավելի քան 1000 տպագրական թերթ գիտական հրատարակություններ բաց թողել:

Աղրբեջանի խորհրդացնական 10 տարիների ընթացքում ստեղծված բազմաթիվ ինքուլույն գիտական հիմնարկությունները գիտության բազմատեսակ շրջաններն են ուսումնասիրում ու սպասարկում ժողովրդական տնտեսության և կուլտուրական շինարարության զանազան ճյուղերին: Գյուղատնտեսական, ինգուստրիալ, բժշկական, մանկաբանա-մանկավարժական, բնագիտական, հասարակական գիտական, լեզվաբանական և ուրիշ միշտաքանական հիմնարկություններ են ստեղծված, վորոնք տարեց տարի ավելի ու ավելի են ծավալում իրանց գիտական աշխատանքը:

Առանձնապես ուժեղ և զարգացել թանկարանա-արխիվագրաբանագին գործը: Կառավարական գիտական հիմնարկությունների հետ զուգընթաց՝ բուռն կերպով աճում են կրթական ընկերությունները:

Վերջապես 1929 թվի հոկտեմբերից Բագվում հիմնված և Աղրբեջանի պետական գիտական-հետազունական ինստիտուտը, վոր գիտական գործիչներ և պատրաստում թուրքական բարձրագույն պարունակություն և Աղրբեջանի ու Արևելքի յերկրների պատմության ու տնտեսական գրության գիտական պրոբլեմները մշակում:

42. Խորհրդագույն իշխանության որոք թատրոնների ցանցն աճել ե, վարակող ավելի ու ավելի մեծ տեղ և բանում հեղափոխական նոր սեպերտմբերը: Փալաւն հաջողություններ և ունեցել թուրքական թատրոնը, վորը հոկտեմբերի գաղափարներ լույն մասսաները միջ մացնող հաղորդիչ հանդիսանալով միենույն ժամանակ ավելի ու ավելի և զեղարքիստական ձեռք ընդունում ու գուրս գալիս ինքնուրույն ստեղծագործության ուղին: Գունդը գալիս ինքնուրույն Աղրբեջանը չի ունեցել իր աղդային իերածտական կուլտուրան և զա զարգացել և միայն խորհրդացնացումից հետո: Յերածտական կուլտուրան ավելի ու ավելի և թափանցում աշխատավոր լայն մասսաների մեջ:

Խորհրդային իշխանության գոյության ընթացքում կինոսերի թիվն Աղրբեջանում հասել և 250-ի: Շարժական կինոսերի միջոցով կինոֆիլմագիայի և լենթարկվում գյուղը: Աղարատներով հարուստ կինո-ֆարբերի և ստեղծված:

Պրոլետարական նոր արվեստն աճում և բռուն թափով: Մի շաբք յերիտասարդ ուժեր են առաջանում գեղարվեստական գրականության (ԱզԱՊՊ), պատկերացնող արվեստների և այլ ասպարելներում:

Արվեստի բոլոր տեսակները (թատրոն, էրաժշտություն, կինո, կենդանագիր, գեղարվեստական գրականության և այլն) ըուրաքանչյուր տարի ավելի են սերտորեն կատվում սոցիալիստական շինարարության և կուլտուրական հեղափոխության խնդիրների հետ՝ չուրեմբերի գաղափարները քարոզելով կենդանի պատկերներով, գեղեցիկ և սովոր յերաժտությամբ ու գծագրական պատկերացումներով, ներկերով և այլն:

43. Խորհրդային իշխանությունն իր գոյության 10 տարիներում առանձնապես խոշոր նվաճումներ և ունեցել թրքունիներին ազատազրելու գործում: Ցարիզմի ժամանակ թրքունին, բացի քաղաքական ու տնտեսական ճնշումից՝ իր վրա եր կրում նույնպես և շարիաթի ու չադրայի լուծը: Միմիայն խորհրդային իշխանությունն և հայտարարել աշխատավոր թրքունիների աղատագրությունն ու իրավունքների կատարյալ հավասարեցումը տղամարդկանց հետ:

Հետամաց թրքունիներին գեպի հասարակական կյանք քաշելու հիմնական միջոց են հանդիսանում կանանց ակումբները, վարոնց մեջ առաջին տեղն և բանում գոչ միայն Ազգային ազգային, այլ և ամբողջ Խորհրդային Միությունում «Ալի Բայրամովի» առաջին որինակելի ակումբը Ազգ ակումբը, զոր 1930 թվի մայիսին իր տասնամյակն և տոնելու, 2000-ից ավելի թրքունիների անդամներ ունի:

Տասը տարվա մեջ 20 հազարից ավելի թրքունիներ են այցելել ակումբի կազմակերպած զատկանություններին, զանազան կրուժեկներ ու զպրոցներ են գրավ և ամ 2000-ից ավելի, ակումբի միջոցով արտադրության մեջ են քաղաքած 500-ից ավելի թրքունիներ և մոտ 500 հոգի ել ակումբում սլրովեսիոնալ կրթություն են ստացել և այլն:

Ազրբեջանի բոլոր շրջաններում նույնական ահազին գործ և կատարված թրքունիներին արտադրության մեջ քաշելու համար: Մանկապարտեզներ ու մասներ են կազմակերպված, աշխատում են մի շաբք կանանց ակումբներ և այլն: Շատ հազարների և հասնում այն թրքունիների թիվը զոր գեն են զցել չադրան:

44. Հնգամյակի վերջին, այսինքն մինչև 1932—33 թիվն Ազրբեջանում վերացված կլինի անզրագիտությունը, մացրված

կլինի լնդանուր պարտադիր ուսում (7-ամյակի ծավալով քաղաքներում, Փաբրիկ-գործարանային շեներում ու ամբողջապես կոլեկտիվացնվող, ույաններում), կինո և սաղիս կմտցնվի բոլոր գյուղերը: Բանվորական համալսարաններում ուսանողների 40%-ից վոչ պակաս ինդուստրիալ բանվորներ կլինին, բոլոր խոշոր կոլխոզներին, սովխոզներին ու մեքենայա-տրակտորային կալարաններին կից գյուղացիական համալսարաններ կրացվեն, իսկ ավելի մանր շնկերություններին կից՝ կուրսեր, այն հաշվով, վոր ամեն մի գյուղինորհութիւն՝ կուրսերի մի կոմպլեկտ ընկերություններ:

Քաղկեդական մասսայական հիմնարկությունների ցանցով (կուլտուրայի տներ, խրճիթ-ընթերցարաններ շեներում, ակումբներ, կուլտուրայի ույանական տներ ու գյուղացու, կոլխոզնիկի տներ կոլխոզներում) կապահովվեն բոլոր խոշոր սովխոզները, կոլխոզներն ու մեքենայա-տրակտորային կալարաններն, ինչպես և բոլոր փարչական կենտրոններն, այնպես վոր ամեն մի գյուղում խրճիթ-ընթերցարան լինի:

45. Համապատասխան զարգացում կտանան նույնական կայուն ու շարժական զրադարանները: Արդյունաբերական ու աշխաներում ու սովխոզներում մինչգարոցական հիմնարկությունները պետք և մտնեն բանվորների ու ծառայողների 100%-ը, իսկ կոլխոզներում 50%-ը: Նախնական հաշվով տեխնիկալների թիվը կավելանա յերկու անգամ, պրոֆեսիոնալները՝ 100 միավորով, բարձր տիպի դպրոցների թիվը մինչև 700, այնպես վոր բուլոր դպրոցներում սովորողների թիվը կլինի մոտ 500 հազար, մինչդեռ 1914—15 թվին յեղել ե 75 հազար, 1919—20 թվին 60 հազար և այս տարի 300 հազար: Իսկ զա նշանակում ե, վոր Ազրբեջանը կրթության կողմից (նայած թե ամբողջ բնակչության մեջ աշակերտներն ինչ տոկոս են կազմում) աշխարհիս առաջավոր յերկների շաբքում կլինի և, իհարկե, վերջին տեղը չըսնի այնաեղ:

## ՅԵԶՈՒԱՓԱԿՈՒՄ

46. Փոխանակ մուսավաթական բանակի, վոր կալվածատերերի ու բուրժուացիայի շահերին եր ծառայում Խորհրդային Ռուսաստանի դեմ կռվելու, ինչպես և Անդրկովկասի մյուս ժողովուրդների դեմ կռվելու և բանվորների ու գյուղացիների հեղափոխական շաբքումը մնշելու համար՝ խորհրդային իշխանությունն իր գոլության առաջին իսկ որից Ազրբեջանում իր կարմիր Բանա-

կըն ու նավատորմիզն և ստեղծել վոր հետո մտել և ամբողջ Խորհրդակին Միության զինված ուժերի ընդհանուր կազմի մեջ:

1920—21 թվին Ադրբեջանի Կարմիր Բանակի ու Նավատորմի մարտական մասերը ակտիվ մասնակցություն են ցույց տվել իմալերի ալիստների զինված ուժերի դեմ տարվող կովին: Ներկայուսուն նրանք արթուն հսկում են խորհրդային սահմաններին:

Իմալերի ալիստների անընդհատ գոտնձգություններն ու Խորհրդակին Միության դեմ իմալերի ալիստական նոր հարձակումների պատրաստումը պահանջում էն, վոր Կարմիր Բանակն ու Նավատորմը ուժեղացնեն խորհրդային սահմանների պաշտպանությունը:

Պայքարելով խաղաղության համար, մենք միևնույն ժամանակ ուետք և պատրաստ լինենք զինված հականարված տալու լպիրշ իմալերի ալիստներին:

Խորհրդակին Ադրբեջանի տասնամյակի տոնումը պետք է կատարվի աշխատավորների ու Կարմիր Բանակի և Նավատորմի կապի ամրապնդման և նրանց վերաբերմամբ բոլոր խորհրդային, կուսակցական, արհեստական կազմակերպությունների հոգածությունն ուժեղացնելու նշանի տակ:

47. Խորհրդային Ադրբեջանի 10 տարվա ընթացքում ունեցած ահազին նվաճումները հնարավոր են յեղել միայն շնորհիվ Կոմունիստական կուսակցության հաստատուն դեկավարությանը: Կուսակցության աշխատանքում քանից յերկան յեկած աջ ու ձախ թեքումները, ինչպես և նեղ-ազգայնական ու վելիկռուժավայրելու կողմից:

Գյուղում և քաղաքում մեր առաջ դրված են սոցիալիստական շինարարության բոլոր խնդիրները: Այդ խնդիրները լուծվել կարող են միայն կուսակմակերպության հետագա ամրապնդումով, բանվորների և բատրակ-չքավոր մասսաներին նրաշարքերը գրավելով, աշխատավոր մասսաների ստեղծագործական ուժերը մոբիլիզացիայի յենթարկելով, ինչպես և ինքնաքննադատութան լայն զարգացման, սոցիալիստական մրցության, հարգածայնության բազայի վրա:

Սոցիալիստական շինարարության 10 տարվա նվաճումների գումարը տալով՝ բանվոր գասակարգն ու գյուղի բատրակ-չքավոր-միջակ մասսաներն ել ավելի են բարձրացնում հակա-խորհրդային կուսակցությունների՝ ես-երների ու մենշեկների, մուսավաթիստների, իթտիհաթիստների, դաշնակների դեմ տար-

վող պայքարի վրոշակը, մերկացնում նրանց հակա-հեղափոխական ագիտացիան, իրանց ուշագրությանը կենտրոնացնում սոցիալիստական շինարարության հերթական խնդիրները լուծելու համար տարվող պայքարն ավելի ուժեղացնելու վրա:

— Պայքար արդյունաբերական-ֆինանսական պլանն իրագործելու և պլանից ել ավելին կատարելու համար:

— Պայքար բոլշևիկյան ինքնաքննադատությունը լայնորեն ու համարձակ ծավալելու և աշխատավորների լայն մասսաները սոցիալիստական մրցության մեջ քաշելու համար:

— Պայքար ցանքսային տարածութուններն ընդարձակելու, ստեղծված կոլխոզներն ամրապնդելու և նորերը զարգացնելու համար:

— Մոբիլիզացիայի յենթարկենք բանվոր գասակարգը, բարակներին, չքավորներին ու միջակներին Ադրբեյջանի գրողակի տակ՝ սոցիալիստական շինարարության հետագա հզոր ծավալման համար քաղաքում և գյուղում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0199910

